2025, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (676)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս և ի սփյուռս,

Քրիստոսի Սուրբ Հարության ցնծագին ավետիսով և աստվածային շնորհների հայցով բերում ենք ամենքիդ հայրապետական Մեր սերը, օրհնությունն ու բարեմաղթանքները:

Փրկչի Սուրբ Հարության տոնը հոչակումն է մահվան հանդեպ կյանքի հաղթանակի. հաղթանակ, որի համար Աստվածորդին Իր անձը զոհաբերեց, հաղթանակ, որը հաստատվեց որպես մարդկության հանդեպ աստվածային սիրո լուսաշող վկայություն: Մեր Տերը հպածվեց, չարչարանքների ենթարկվեց, խաչվեց և մահը ճաշակեց: Աստվածորդու անձնազոհության վշտագին իրողության հանդիման, ինչպես վկայում են ավետարանիչները, Տիրոջ աշակերտներին ու հետևորդներին համակեցին վիատությունն ու հուսահատությունը:

Մահվան թվացյալ հաղթության տագնապի մեջ, սակայն, մշտավառ հույս, զորություն ու ոգեշնչում դարձավ Քրիստոսի թափուր գերեզմանից հնչած Սուրբ Հարության հրեշտակաձայն ավետիսը. «Չէ աստ, այլ յարեաւ» (Ղուկ. 24.6): Այս ցնծալի ավետիսը, արդարև, հաղթերգն է Քրիստոսի փրկչական առաքելության:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իր հրաշափառ Հարությամբ կյանքն ազատագրեց մահվան շղթաներից, փրկության լույսը ծագեցրեց աշխարհում և Իրեն հավատացողներին ժառանգորդ դարձրեց հավիտենական կյանքի և երկնքի արքայության՝ ըստ Իր կենարար խոստման. «Ով հավատում է Ինձ, թեպետ և մեռնի, կապրի» (Հովհ. 11.25): Տիրոջ փրկչական առաքելությունը եղավ չարի դեմ Բարու, խավարի դեմ Լույսի, մահվան դեմ Կյանքի պայքար, որ պսակվեց Հարության փառապանծ հաղթանակով: «Ո՞ւր է, մա՜հ, քո հաղթանակը, ո՞ւր է, գերեզմա՜ն, քո խայթոցը» (Ա Կորնթ. 15.55),– քաջալերված բարձրաձայնում է առաքյալը: Աստվածորդու Հարությամբ աշխարհի առջև բացվում է հավիտենության և փրկության ճանապարհը, և երկրավոր իրականությունը սահմանավորից ընդարձակվում է դեպի անսահմանը, դեպի երկնայինը:



Սիրելի՛ բարեպաշտ հավատավոր զավակներ, Քրիստոսի Սուրբ Հարությամբ, հիրավի, վերափոխվում է մարդկության պատմությունը, բացահայտվում է կյանքի իմաստը: Հարության շնորհը փրկություն է պարգևում բարի, արդար և հավատավոր կյանքի համար, Տիրոջ հետևորդներին արժանացնում աստվածային առատ օրհնությունների ու բարիքների, ուրախակից դարձնում երկնայիններին և մասնակից՝ հավերժական երանության անանց բերկրանքին: Տիրոջ փրկարար կամքին հակառակ՝ չար ու մեղսալի ընթացքը, սակայն, դատապարտություն է և հավիտենական պատիժ՝ անվերջանալի տանջանքների մեջ:

Այսօր, ցավոք, ականատես ենք կործանարար դրսևորումների աշխարհի տարբեր կողմերում, որտեղ մոլեգնում են անարդարություններ, ատելություն ու թշնամանք: Պատերազմն ու ավերածությունները, մահն ու սովը ահասարսուռ արհավիրքներ են սփռում, խեղում մարդկային կյանքեր, թշվառության մատնում բազմահազար ընտանիքների: Քաղաքական, տնտեսական ու ռազմական հակամարտությունների հորձանուտում ոտնահարվում են ազգերի ու պետությունների իրավունքներ, անտեսվում խղճի և բարոյականության արժեքներ, ավերվում հոգևոր-մշակութային համամարդկային ժառանգություն: Այս փոթորկահույզ իրավիճակներում տառապող մարդկությունը տենչում է խաղաղություն, փափագում աղետների ու բռնությունների ավարտ, համերաշխություն ու երջանկություն:

Աշխարհաքաղաքական ներկա տագնապալի զարգացումների պայմաններում ազգային ու հայրենական մեր կյանքը ևս գտնվում է լրջագույն հիմնախնդիրների առջև: Անվտանգային մարտահրավերների հետևանքով ստեղծված բարդ կացությունն առավել ծանրանում է ներքին պառակտումներով ու ճգնաժամային նոր իրավիճակներով: Մտահոգիչ են նաև մեր իրականության մեջ չդադարող մերժելի գործողություններն ու արշավները՝ ընդդեմ ազգային և քրիստոնեական մեր ինքնության ու անցյալի: Հավաքական մեր հիշողության մեջ որպես բաց վերք է շարունակում մնալ քսաներորդ դարասկզբին՝ 110 տարի առաջ, Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունը, որի չփարատվող ցավը խորանում է այդ սոսկալի ոճրագործությունը կասկածի տակ դնելու կամ ժխտելու դատապարտելի փորձերով և աշխարհում տեղ գտնող նոր ցեղասպան գործողություններով: Ոճրագործ այդ դրսևորումներից էր վերջերս մեր ժողովրդի նկատմամբ իրականացված եղեռնագործությունը՝ Արցախի բռնազավթումը և արցախահայության բռնի տեղահանությունը հայրենի հողից:

Մենք, սիրելի՛ ժողովուրդ հայոց, Տիրոջ Հարության շնորհի ժառանգորդներն ենք և այդ անխախտ հավատով ի զորու ենք մեր տառապանքներն ու կորուստները վերափոխելու ազգային վերածննդի՝ հավատարիմ մնալով տերունական պատգամներին, անսակարկ սեր ու նվիրում դրսևորելով մեր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ: Հայրապետական Մեր հորդորն է՝ ազգի շահը վեր դասել անձնական ու խմբային նկրտումներից, պարտադրվող հայրենավնաս քայլերից: Մերժենք մեր կյանքից կեղծիքն ու սուտը, խպտառ հեռու վանենք ազգակործան բարքերն ու արարքները, մեր անցյալը, պատմական հիշողությունները նսեմացնող ու արժեզրկող, մեր ապագան վտանգող խոսքերն ու գործերը: Համախմբվենք մեր հավատքի, ինքնության, արժեքների, պատմության, մեր պետության և ապագայի համընդհանուր տեսլականի, այն ամենի շուրջ, ինչը նվիրական է, ինչը միավորում է մեզ ամենքիս որպես ազգ ի Հայաստան և ի սփյուռս: Միաբանությունն է մեր ազգի հզորացման և արժանապատիվ կյանքի վերականգնման ամուր և հուսալի հիմքը: Արդ, լինենք միաբան ու միասնական՝ համախոհությամբ և մեր ողջ ներուժի գործադրումով դիմագրավելու մեզ պատուհասած փորձությունները: Ողբերգություններն ու դժվարությունները կդադարեն, եթե ապրենք հավիտենական կյանքի համար, ամենուր Փրկչի օրինակով խավարի մեջ լինենք լույսի ջահակիրներ, լինենք մարտիկներ ընդդեմ անարդարության ու չարիքի: Մեր ազգի ու հայրենիքի վերհառնումը նաև իրական դարձնենք նոր զավակների ծնունդով և մատաղ սերնդի արժանավոր կրթությամբ ու դաստիարակությամբ՝ ապահովելով հայության հարատև ընթացքը դեպի գալիքի հուսառատ հորիզոններ: Մեր ժողովուրդը, որ Փրկչին ապավինած՝ ավերներ ու նախճիրներ է հաղթահարել, չի կարող այսօր հանձնվել ու տրվել մահին, այլ պիտի լինի կրողը հարության հույսի ու շնորհի՝ աննկուն ոգով և անխախտ հավատով միշտ ազդարարելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Քրիստոսի Հարության կենսապարգև այս ավետիսով Մեր ողջույնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, քույր Եկեղեցիների Պետերին՝ մաղթելով գահակալության արդյունավոր, արևշատ տարիներ: Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք հղում նաև մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգևոր դասին և համայն հավատավոր Մեր ժողովրդին: Տիրոջ սերը, օգնականությունն ու ողորմությունը թող պահապան լինեն ազգիս ու հայրենյաց:

Սուրբ Հարության այս լուսաշող առավոտ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, աղոթենք միասին առ Հարուցյալ Քրիստոս՝ աշխարհի, մեր ժողովրդի և հայրենիքի խաղաղության, ապահովության ու անվտանգության համար: Մեր հայցն է, որ Հարության կենսանորոգ շնորհները վերափոխեն մարդկության կյանքը բարությամբ, արդարությամբ ու համերաշխությամբ: Թող աստվածային երկնառաք պարգևներով գոտեպնդվի մեր ազգը, հաղթահարի առկա բոլոր նեղություններն ու դժվարությունները և կերտի նորանոր նշանակալի ձեռքբերումներ՝ ի զորացում և ի փառս մեր հայրենիքի և ի հավետ պայծառություն համայն հայության այսօր և միշտ և հավիտյանս. ամեն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Հայրապետական Սուրբ Պատարագ Մայր Աթոռում Սուրբ Հարության տոնի առիթով

Ապրիլի 20-ին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Մայր Տաճարի զանգերի ավետաբեր ղողանջների ներքո հայրապետական խաչվառազարդ թափորը Ամենայն Հայոց Կաթողիկոսին Վեհարանից ամպհովանիով առաջնորդեց դեպի Մայր Տաճար:

Հայրապետական ամպհովանին այս տարի կրում էին ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր սրտաբան, «Էրեբունի» ԲԿ սրտաբանական կենտրոնի ղեկավար Համլետ Հայրապետյանը, Երևանի գլխավոր մանկական վիրաբույժ, ԵՊԲՀ-ի մանկական վիրաբուժության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Նիկոլայ Դալլաքյանը, «Աստղիկ» ԲԿ-ի տնօրեն Ասատուր Ասատրյանը և ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր անեսթեզիոլոգ, «Նաիրի», «Էրեբունի» ԲԿ-ի անեսթեզիոլոգիայի ծառայությունների ղեկավար, Երևանի՝ վերջույթների վերակառուցման և երկարացման կենտրոնի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի բաժանմունքի ղեկավար Անատոլի Գնունին:

Վեհափառ Հայրապետին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպս. Բաբայանն ու Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վարդան եպս. Նավասարդյանը:

Հայրապետական Սուրբ Պատարագին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, քաղաքական-հասարակական գործիչներ և բազում ուխտավոր հայորդիներ:

Արարողության ընթացքում Նորին Սրբությունը Սուրբ Էջմիածնից համայն հայությանը հղեց հայրապետական իր պատգամը՝ փոխանցելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» հրեշտակաբարբառ ավետիսը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակության օրվա առիթով

«Դու չես լքի նրանց, ովքեր փնտրում են Քեզ, Տեր» (Սաղմ. 9.11):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր Հայաստանում և ի սփյուռս աշխարհի ոգեկոչում ենք Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցը՝ խոնարհումով և աղոթքով հիշելով մեր սուրբ նահատակներին, որոնք մարտիրոսության պսակն ընդունեցին «վասն հաւատոյ և վասն հայրենեաց»:

20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից կազմակերպված հրեշավոր ցեղասպանությանը զոհ դարձան մեր ժողովրդի մեկ և կես միլիոն զավակներ: Իրագործված եղեռնի և հայրենազրկումի մեծ ողբերգությունները, սակայն, չկարողացան սպառել մեր ազգի կենսական ուժերը: «Ճնշված, բայց ոչ՝ ընկճված, կարոտյալ, բայց ոչ՝ հուսահատ, հալածված, բայց ոչ՝ լքված» (Բ Կորնթ. 4.8–9) մեր ժողովուրդը վերապրեց՝ ապավինելով խաչված և հարություն առած Փրկչին աշխարհի, վերապրեց հանուն արդարության ամենօրյա պայքարով, իր ինքնությանը կառչած և Հայոց արդար դատի հաղթանակի հավատով: Աստվածպարգև մեր հինավուրց հայրենիքի հանդեպ սերը, նվիրվածությունն իր սրբություններին, հավատարմությունն իր պատմությանն ու դարավոր հիշատակներին զորացրին ազգիս աշխարհի տարբեր երկրներում նոր կյանք ընձյուղելու, իսկ Արարատի փեշերին՝ Արևելյան Հայաստանում, անկախ պետականություն վերակերտելու: «Դու չես լքի նրանց, ովքեր փնտրում են Քեզ, Տեր»՝ սուրբգրային հուսառատ խոսքի հավատով ազգիս զավակները ամենուր դիմակայեցին ժամանակների փորձություններին, կենարար ավիշ առան՝ ազգային-հոգևոր իրենց կյանքը վերականգնելու, բարձր արվեստ ու մշակույթ ստեղծելու և գիտություն ու կրթություն զարգացնելու:

Հիշատակի այս նվիրական օրը, սիրելինե՛ր, աշխարհում ամեն տեղ մեր ժողովրդի զավակները իրենց քայլերն են ուղղում դեպի եկեղեցիներ և Մեծ եղեռնի հուշակոթողներ՝ վերանորոգելու հանձնառության սրբազան ուխտը՝ իբրև պետություն, իբրև Եկեղեցի և ժողովուրդ շարունակելու մշտական ջանքերը Հայոց ցեղասպանության ճանաչման համար: Արդարև, մարդկության ու մարդկայնության դեմ գործված ոճրագործությունները չունեն ո՛չ արդարացում և ո՛չ վաղեմության ժամկետ: Հայոց ցեղասպանության ճանաչումն ու համընդհանուր դատապարտումը առաքելություն է մեր ժողովրդի և քաղաքակիրթ ողջ մարդկության համար:

Շնորհիվ աշխարհասփյուռ մեր ժողովրդի համախումբ ջանքերի և միջազգային հանրության աջակցության՝ բազմաթիվ երկրներ ու իրավապաշտպան կազմակերպություններ իրենց ձայնն են բարձրացրել հանուն արդարության և Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու որակել են որպես մարդկության դեմ իրագործված հանցագործություն:

Հայոց ցեղասպանության դատապարտումը չպիտի սահմանափակվի սոսկ հուշարձանների մոտ համախմբումով, այլ պիտի գործադրվեն հետևողական քայլեր՝ մեր ժողովրդի հանդեպ արդարությունը վերականգնելու և կանխելու նման ողբերգությունները: Առանց այսօրինակ հանցագործությունների դատապարտման, առանց պատմական արդարության հետ առերեսվելու՝ հնարավոր չէ խաղաղություն հաստատել ազգերի և պետությունների միջև և սերունդներին փոխանցել լուսավոր ապագա: Ապահով ու անվտանգ աշխարհ կառուցելու ճանապարհը բացառումն է բռնությունների, պատերազմների, ատելության ու թշնամանքի հրահրումների: Մեր արդար դատի պահանջատիրությունը չունի իր մեջ ատելություն ու թշնամանք: Պահանջատիրությունը ցուցիչն է ազգային մեր արժանապատվության և հարացույցը՝ մեր սուրբ նահատակների նկատմամբ հարգանքի ու նրանց հիշատակի առջև մեր խոնարհումի: Պահանջատիրությունը մեր պատասխանատվությունն է գալիք սերունդների առջև:

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, մերօրյա ծանր ու դժվարին իրավիճակում, երբ նոր ցեղասպանության իրականացմամբ այլևս բռնազավթված և հայաթափված է Արցախը, և Հայաստանը գտնվում է անվտանգային սպառնալիքների առջև, առավել հրամայական է անսասան պահել հավատարմությունը հավատք, ազգ ու հայրենիք նվիրական արժեքներին, հրամայական է միաբանվել ու մշտապես գործել արդարության հաղթանակի համար և վերափոխել մեր կյանքի ընթացքը՝ հանուն ազգային վերազարթոնքի: Տերը չի լքում Իրեն փնտրողներին. այս անխախտ համոզումով շարունակենք արիաբար դիմակայել մեզ բաժին ընկած փորձություններին և համատեղ ուժերով բարեգարդել ազգային և հայրենական մեր կյանքը: Հակառակ առկա անվտանգային սպառնալիքների և շարունակվող ներազգային պառակտվածության, հակառակ մեր իրականության մեջ տեղ գտնող պատմության ու արժեքային խեղաթյուրումների, քարոզվող այլևայլ կեղծ ընկալումների՝ նախանձախնդիր լինենք հոգևոր ու բարոյական մեր արժեքների պահպանությանը և զորանանք հայրենիքի ու ազգի հանդեպ սիրով: Հիրավի, մեր նախնյաց ժառանգության նկատմամբ հավատարմությունը, համազգային համերաշխությունն ու հայրենիքի հանդեպ պարտքի բարձր գիտակցությունը երաշխիքն են մեր ազգի հարատևության և անկախ պետականության գոյության:

Մեր սուրբ նահատակների հիշատակն այսօր մեզ ազդարարում է հրատապությունը ազգային միասնականության: Մեր համախոհության մեջ է գործում Աստված Իր օրհնությամբ ու շնորհներով: Այս ուղիով առաջնորդվելով, սիրելինե՛ր, պիտի կարողանանք ապահովել անվտանգությունն ու բարօրությունը մեր հայրենիքի և իրագործել ապագայի մեր տեսիլքներն ու երազանքները:

Այս հավատով աղոթք վերառաքենք առ Աստված և հայցենք մեր սուրբ նահատակների բարեխոսությունը, որ մարդկության կյանքում տեղ չգտնեն եղեռնական ոճրագործությունները, և հարուցյալ Քրիստոսի շնորհների ներքո խաղաղ ու ապահով լինեն մեր հայրենիքն ու մեր ժողովուրդը ի սփյուռս աշխարհի, և հույսով ամուր ու սիրով միասնական՝ ի զորու լինենք հաղթահարելու մեր առջև ծառացած բոլոր փորձությունները:

Թող հարուցյալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողորմությունը, օրհնություններն ու խաղաղությունը լինեն մեզ հետ և ամենքի, այսօր և միշտ. ամեն:

Ավագ շաբաթը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հիսուս Քրիստոսի Վերջին ընթրիքի և Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման հիշատակությունը Մայր Աթոռում

Ապրիլի 17-ին՝ Ավագ հինգշաբթի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Վերջին ընթրիքը և Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատումը: Այս առիթով առավոտյան Մայր Տաճարում կատարվեց Ապաշխարողաց կարգ, այնուհետև՝ Միջօրեի ժամերգություն:

Ժամերգության ավարտին Միածնաէջ Տաճարում ձեռամբ Մայր Աթոռի փոխլուսարարապետ Հոգեշնորհ Տ. Դավիթ աբղ. Օհանյանի մատուցվեց Սուրբ Պատարագ՝ ի հիշատակ Վերջին ընթրիքի ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման:

Սուրբ Պատարագի ընթացքում ընթերցվեց նաև Սուրբ Բարսեղ Կեսարացու «Սուրբ Հաղորդության մասին» ճառը:

Ոտնլվայի կարգը Մայր Աթոռում

Ապրիլի 17-ին՝ Ավագ հինգշաբթի, Միածնաէջ Մայր Տաճարում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Ոտնլվայի կարգը:

Սրբազան արարողության ընթացքում՝ սուրբգրային ընթերցումներից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը: Ապա շարականների երգեցողության ներքո, Աստվածորդու օրինակով, Նորին Սրբությունը ծնրադիր լվաց և յուղով օծեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Գերաշնորհ Տ. Վահան եպս. Հովհաննիսյանի, Հոգեշնորհ Տ. Մաշտոց աբղ. Մխիթարյանի, Բարեշնորհ Արման սրկ. Մանուկյանի, Գևորգյան հոգևոր ճեմարանի սաներ Դավիթ սրկ. Ղամբարյանի, Արմեն դպիր Գրիգորյանի, ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի

ուսանողներ Դավիթ Գրիգորյանի, Արթուր Մանուկյանի, ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայողներ Խաչիկ Մինասյանի, Գոռ Գևորգյանի, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներ Համբարձում Խանզաձյանի, Մեր Ավագյանի, ինչպես նաև մանուկներ Օհան Օհանյանի, Սպարտակ Գասպարյանի, Դավիթ և Տիգրան Պետրոսյանների ոտքերը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց ներկա բարեպաշտ ժողովրդին, որից հետո օրհնված յուղը բաժանվեց հավատացյալներին:

Խավարման կարգը Մայր Տաճարում

Ապրիլի 17-ին՝ Ավագ հինգշաբթի երեկոյան, Միածնաէջ Մայր Տաճարում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Խավարման կարգը:

Խաչելության կարգը և Թաղման կարգը Միածնաէջ Մայր Տաճարում

Ապրիլի 18-ին՝ Ավագ ուրբաթ, Միածնաէջ Մայր Տաճարում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեցին Խաչելության կարգը և Թաղման կարգը:

Սուրբ Հարության Ճրագալույցի Պատարագը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 19-ին՝ Ավագ շաբաթ օրվա երեկոյան, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Գերաշնորհ Արշակ արք. Խաչատրյանը: Մինչ Սուրբ Պատարագը կատարվեց Ճաշու երրորդ ժամերգությունը, ապա կարդացվեցին սուրբգրային ընթերցվածքներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներից ընթերցեցին Դանիել մարգարեի թուղթը:

Սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի բարերարներ, քաղաքական-հասարակական գործիչներ և բազում ուխտավոր հայորդիներ:

Արշակ արքեպիսկոպոսը, իր քարոզում անդրադառնալով Հարության խորհրդին, ընդգծեց, որ երկու հազար տարվա հեռավորությունից հետո էլ Տիրոջ Հրաշափառ Սուրբ Հարությունը շարունակում է գերել մարդկանց հոգիները, չսպառվող հույս ու հավատ ներշնչել քրիստոնյաների սրտերին:

Այնուհետև, խոսելով Հիսուս Քրիստոսի կյանքի վերջին օրերի ողբերգական իրադարձությունների մասին, ի մասնավորի նշեց. «Թվում էր՝ Հիսուսի մահվամբ ավարտվեց մարդկային կյանքի հերթական մի պատմություն: Թվում էր՝ եղավ այն, ինչ լինում է միշտ. մահը կլանեց հերթական զոհին:

Այսպես անհիշատակ ու անփառունակ կավարտվեր Քրիստոսի ու քրիստոնեության պատմությունը, եթե մահը հաղթեր կյանքին, և եթե կնքված մնար գերեզմանի քարը: Կավարտվեր, եթե չհնչեր խավարը ճեղքող հրեշտակաձայն ավետիսը. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Հարության հրաշքով Հիսուս լիարժեքորեն բացահայտեց Իր Աստվածությունը: Հիսուսի հարությամբ իմաստավորվեցին Նրա կրած հալածանքներն ու չարչարանքները, Նրա խաչելության, մահվան ու թաղման խորհուրդները: Քրիստոսի հարությամբ մահը դադարեց կյանքի առջև ծառացած անհաղթահարելի պատնեշ լինելուց, այլ դարձավ մի դուռ, որ բացվում է դեպի հավերժություն: Եվ դրա համար Քրիստոս ասում է. «Ես եմ Հարությունն ու կյանքը. ով հավատում է Ինձ, թեպետ և մեռնի, կապրի» (Հովհ. 11:25–26):

Քրիստոսի Հարության տիեզերական ծավալները, սակայն, երբեք ու երբեք չեն նսեմացնում կամ ոչնչացնում երկրավոր կյանքի արժեքը, այլ այն դարձնում են հավիտենության նախասրահ: Առանց Հարության՝ երկրավոր կյանքը դատապարտված է վերածվելու մի մրցասպարեզի, ուր մրցանակ են դառնում փչացող նյութը, խամրող գեղեցկությունը, ջլատվող ուժը և փոշիացող իշխանությունը: Առանց Հարության՝ ջնջվում են բնագծերը մեղքի ու առաքինության, բարու և չարի, լույսի և խավարի: Առանց Հարության՝ չկան սահմաններ, ու չկան ուղենիշեր, չկան նպատակներ, ու չկան միջոցներ, և վերջապես, չկա՛ կյանք, այլ կա միայն ու միայն սրընթաց ու աննպատակ մի վազք դեպի գերեզման: Այսպես է Հարության ժխտումը ոչնչացնում կյանքը և մարդուն մղում ինքնաստվածացման, սեփական ցանկությունների ու իրավունքների բացարձակացման: Մինչդեռ Հարության լույսի ներքո կյանքի յուրաքանչյուր հանգրվան՝ ծնունդից մինչև մահ, փրկության մի օղակ է հավերժության շղթայում: Հարության լույսի ներքո երկրի գործերն արձագանք են ստանում հավերժության մեջ, երկրի ջանքերը գանձեր են դառնում երկնքում: Եվ կրկին ու կրկին ճշմարիտ է սուրբ առաքյալը. «Եթե Քրիստոս հարություն չի առել, ընդունայն է ձեր հավատը» (Ա Կորնթ. 15:17)»:

Ապա դիմելով հավատավոր ժողովրդին՝ պատարագիչ սրբազանը նկատեց, որ Սուրբ Հարության խորհուրդը կյանք ու փրկություն պիտի դառնա նաև այսօր մեզ համար:

«Ես չունեմ խոսքեր՝ համոզելու ձեզ Հարության ճշմարտացիության մեջ, ես չունեմ բառեր՝ հավաստիացնելու ձեզ հավիտենական կյանքի իսկության մեջ: Ունեմ միայն համոզում, որ չի՛ կարող կյանքը սահմանափակվել անիմաստ ու ողբերգական մահվամբ: Ունեմ համոզում, որ չի՛ կարող կյանքն ավարտվել լացով ու ողբերգությամբ, և չի՛ կարող գերեզմանը դառնալ կյանքի ողջ ու ամբողջ էությունն ու բովանդակությունը: Եվ ունեմ համոզում, որ Հիսուս իսկապես Հարություն է առել, և դրանով է հենց Նա Աստված: Աստված չի կարող մահանալ: Եթե Աստված մեռած է, ուրեմն ընդունայն են ոչ միայն մեր քարոզությունն ու մեր հավատքը, այլև մեր ողջ կյանքը, և աննպատակ՝ մեր ողջ ընթացքը: Իսկ քանի որ աննպատակ չէ մեր կյանքը, ուրեմն ճշմարիտ է Հիսուսի Հարությունը, և անժխտելի՝ Աստծո լինելիությունն ու մասնակցությունը մեր կյանքին: Եվ վերջապես, ավելի դյուրին է հավատալ այն բանին, որ Աստված իրապես Հարություն է առել, քան նրան, որ Աստված շարունակում է մնալ մահացած»,– ասաց սրբազան հայրը՝ հորդորելով հավատացյալներին փորձությունները վերածել կամքի զորացման, մերժել թերահավատությունն ու կասկածները, սայթաքելուց հետո վեր կենալ, մեղանչելուց հետո չդադարել մնալ Հարության մարտիկ, հուսախաբությունից հետո չպարպվել հույսից, պայքարել մեղքի դեմ, պայքարել կյանքի ու արժանապատվության, հավատքի և ինքնության, առաջընթացի ու կատարելագործման համար»:

Հավարտ Սուրբ Պատարագի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ Ավագ Սուրբ Խորան և Սուրբ Սեղանի կանթեղից վառեց Հիսուս Քրիստոսին խորհրդանշող մոմը, որից կենսատու լույսը բաշխվեց հավատացյալներին:

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր, նախագահությամբ Հայոց Հովվապետի, կատարվեց Սուրբ Հարության տնօրհնեք:

Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ոգեկոչման արարողությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Այդ կապակցությամբ հավատացյալների խոնարհումի համար դուրս էր բերվել նաև Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի ասպիրանտուրայի բաժնի ղեկավար Գերաշնորհ Տ. Դանիել եպիսկոպոս Ֆընտըգյանը:

Պատարագի սրբազան արարողության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական ուղերձը հղեց համայն հայությանը:

Սուրբ Պատարագի ավարտին եկեղեցականների թափորը, կրելով սուրբ նահատակների մասունքարանը, ուղղվեց դեպի Մայր Տաճարի շրջափակ, ուր Աղոթքի և ուխտի խաչքարի առջև, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր

Ապրիլի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը: Հուշահամալիրում ծաղկեպսակի զետեղումից հետո Նորին Սրբության նախագահությամբ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Վրաստանի նախագահին

Ապրիլի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի նախագահ Միխեիլ Կավելաշվիլիին:

Ողջունելով նախագահի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Հայոց Հայրապետն անդրադարձավ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Այս առնչությամբ Նորին Սրբությունը նկատեց, որ պատմության ընթացքում հայ և վրաց ժողովուրդները, ապավինած իրենց քրիստոնեական հավատքին ու արժեհամակարգին, կարողացել են հաղթահարել բազմաթիվ դժվարություններ և փորձություններ՝ պահպանելով իրենց ազգային ինքնությունն ու դիմագիծը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանք հայտնեց վրաց իշխանություններին տասնհինգ հայ ռազմագերիների վերադարձման ուղղությամբ գործադրած միջնորդական ջանքերի, ինչպես նաև Վրաստանի հայ համայնքի նկատմամբ հոգածու վերաբերմունքի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Նորին Սրբություն Համայն Վրաստանի Իլյա Բ Կաթողիկոս-Պատրիարքին:

Իր հերթին Վրաստանի նախագահ Միխեիլ Կավելաշվիլին գոհունակությամբ անդրադարձավ Հայաստան իր պաշտոնական այցի արդյունքերին՝ կարևորելով քրիստոնեական հավատքի բացառիկ դերակատարությունը երկու ժողովուրդների հոգևոր, մշակութային, ազգային ինքնության պահպանման և պատմության ընթացքում ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում: Նախագահը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ Վրաստանը կշարունակի իր միջնորդական ջանքերը տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման և գերիների ազատ արձակման ուղղությամբ:

Վերջում Վրաստանի նախագահ Միխեիլ Կավելաշվիլին հոգևորականների ուղեկցությամբ այցելեց Մայր Տաճար, ծանոթացավ հիմնանորոգված սրբավայրի պատմությանը: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Կիրակոս եպս. Դավթյանը և երկու երկրների դեսպանները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ապրիլի 15-ին **ՀԲԸՄ-ի «Բացահայտիր Հայաստանը» ծրագրի մասնակիցներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) «Բացահայտիր Հայաստանը» հայրենաճանաչության ծրագրին մասնակից սփյուռքահայ երիտասարդներին:

Իր օրհնությունն ու հայրական պատգամը բերելով երիտասարդներին՝ Հայոց Հայրապետը բարձր գնահատեց ՀԲԸՄ-ի իրականացրած նմանօրինակ ծրագրերը, որոնց շնորհիվ Սփյուռքի երիտասարդ հայորդիները հնարավորություն են ստանում հաղորդ դառնալու հայրենի իրականությանը, ծանոթանալու հայ հոգևոր-մշակութային ժառանգությանը և բացահայտելու իրենց ինքնությունը՝ զորացնելով ազգային ոգին ու գիտակցությունը: Վերջում Նորին Սրբությունը երիտասարդներին պատգամեց ապրել աղոթական կյանքով, ամուր պահել կապը Մայր Եկեղեցու հետ՝ հորդորելով յուրաքանչյուրին ներգրավվել ազգային կյանքում և օգտակարություն բերել ինչպես իրենց երկրների հայ համայնքների, այնպես էլ՝ հայրենիքի առաջընթացին:

➥ էջ 5, 6

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

➥ էջ 4

Ապրիլի 22-ին **Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության պատվիրակությանը՝ գլխավորությամբ նորընտիր գործադիր տնօրեն Սերժ Պուչաքճյանի և նորընտիր նախագահ Գարի Ֆիլլիպսի:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Սուրբ Էջմիածնի և ընկերակցության միջև առկա հարաբերություններին: Հրամայական նկատվեց ազգային միասնության զորացումը հաղթահարելու համար հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերները:

Ապրիլի 23-ին **Բրազիլական ՁԼՄ-ների ներկայացուցիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց բրազիլական լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի նախագահ տիար Վազգեն Յակուբյանի:

Հանդիպմանը տիար Յակուբյանը նշեց, որ ավանդույթ է դարձել ՀԲԸՄ-ի Բրազիլիայի գրասենյակի կողմից կազմակերպվող բրազիլական լրատվամիջոցների ներկայացուցիչների ամենամյա այցը Հայաստան, որի նպատակն է ի մոտո ծանոթանալ և Բրազիլիայի լայն հասարակությանը հաղորդ դարձնել հայ ժողովրդի պատմությանը, հոգևոր-մշակութային ժառանգությանը և երկրում տիրող իրավիճակին:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ՀԲԸՄ-ի Բրազիլիայի գրասենյակին՝ նման նախաձեռնության համար՝ կարևորելով օտարերկրյա լրատվական հարթակներում Հայաստանի անվտանգային խնդիրների, Արցախի բռնազավթման, արցախահայերի արդար իրավունքների, Բաքվում պահվող գերիների և հայկական հոգևոր-մշակութային արժեքների ոչնչացման մասին ճշմարտության բարձրաձայնումն ու միաջզգային հանրության իրազեկումը:

Զրույցի ընթացքում քննարկվեցին նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությանն ու ազգապահպան առաքելությանը, Եկեղեցու կողմից արցախահայությանը ցուցաբերվող սոցիալական աջակցության ծրագրերին, ինչպես նաև միջեկեղեցական փոխհարաբերություններին առնչվող հարցեր:

Փաստաբանների միջազգային համաժողովի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությամբ Երևանում գումարված միջազգային համաժողովի մասնակից փաստաբաններին՝ գլխավորությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ տիար Սիմոն Բաբայանի:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր տիար Արա Զոհրաբյանը ներկայացրեց հյուրերին, որոնց նպատակներից էր ծանոթանալ ազգային և հասարակական կյանքում Հայ Եկեղեցու առաքելությանը:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն անդրադարձավ հայ ժողովրդի կյանքում Սուրբ Էջմիածնի առանցքային դերակատարությանը, ընդգծեց, որ քրիստոնեական հավատքը դարեր շարունակ եղել է ազգային, հոգևոր արժեքների և հայի ինքնության կերտողը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մասնավոր անդրադարձ կատարեց 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ոճրագործությանը՝ Հայոց ցեղասպանությանը, ինչպես և վերջին տարիներին Ադրբեջանի կողմից արցախահայության նկատմամբ իրականացված ցեղասպան գործողություններին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը խոսեց նաև Հայաստանի առջև ծառացած անվտանգային մարտահրավերների, արցախահայության արդար իրավունքների պաշտպանության, գերիների վերադարձման, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության անխաթար պահպանման խնդիրների մասին՝ կարևոր նկատելով միջազգային իրավապաշտպան տարբեր կառույցների առաքելությունը ոճրագործությունների կանխարգելման ու դատապարտման գործում:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց ներկաներին՝ միջազգային հարթակներում ժողովուրդների իրավունքների պաշտպանության և հասարակությունների մեջ արդարության հաստատմանն ի խնդիր ներդրվող ջանքերի համար:

Ապրիլի 24-ին **Նիդերլանդների Թագավորության կրթության, մշակույթի և գիտության նախարարին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նիդերլանդների Թագավորության կրթության, մշակույթի և գիտության նախարար էպպո Բրուինսի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Մարիկե Հարիետ Մոնրոյ-Վինքերը:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց նվիրական այս օրը հյուրերի՝ Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի առիթով, երբ հայ ժողովուրդը ոգեկոչում է Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցը: Նորին Սրբությունն ընդգծեց, որ այսօր ազգի զավակների ուխտի երթերը դեպի Եղեռնի հուշակոթողներ ուղեկցվում են այն գիտակցությամբ, որ Հայոց ցեղասպանությունը պիտի համընդհանուր ճանաչում և դատապարտում գտնի, որպեսզի նման ոճրագործություններ երբևէ մարդկային կյանքում չկրկնվեն: Այս առնչությամբ Հայոց Հայրապետը ցավով անդրադարձավ, որ պարբերաբար ականատես և ականջալուր ենք լինում տարբեր երկրներում իրագործված նոր ցեղասպանությունների՝ նշելով, որ նման ցեղասպանություն իրականացվեց նաև Ադրբեջանի կողմից՝ Արցախի բռնազավթմամբ և հայաթափմամբ:

Հայոց Հովվապետն իր գնահատանքը հայտնեց Նիդերլանդների Թագավորությանը Ցեղասպանության դատապարտման, ինչպես և դժվարին օրերին Հայաստանին և արցախահայությանը ցուցաբերած զորակցության համար:

Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաև երկու ժողովուրդների միջև պատմական կապերին և առկա գործակցությանը՝ գոհունակությամբ նկատելով, որ տեղի հայ համայնքն ակտիվորեն ներգրավված է երկրի զարգացման գործընթացին:

Նախարար էպպո Բրուինսը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն ընդունելության համար, կիսվեց Հայաստանից ստացած իր տպավորություններով և կարևորեց Հայ Եկեղեցու դարավոր փորձը՝ ի նպաստ փոփոխվող աշխարհում հավատքի և ժամանակակից կյանքի ներդաշնակության:

Ապրիլի 28-ին **Արգենտինացի իրավաբանների և լրագրողների**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայից ժամանած մի խումբ իրավաբանների և լրագրողների՝ ուղեկցությամբ արգենտինահայ Խուան Պաբլո Գեչիջյանի:

Վերջինս Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ խմբի այցը Հայաստան նպատակ է հետապնդում ավելի խորը ճանաչելու հայ ժողովրդին, նրա պատմությունը, մշակույթն ու հոգևոր ժառանգությունը, ինչպես նաև ծանոթանալու երկրում տիրող իրավիճակին:

Իր օրհնությունը բերելով ներկաներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների բարեկամական հարաբերություններին և երկրների միջև առկա գործակցությանը:

➥ էջ 6

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Արգենտինացի իրավաբանների և լրագրողների

➥ էջ 4, 5

Վեհափառ Հայրապետը մասնավորապես խոսեց Արգենտինայի հայ համայնքի ազգային-հոգևոր աշխույժ կյանքի և կազմակերպվածության մասին՝ այս առնչությամբ իր գնահատանքը հայտնելով երկրի իշխանություններին հայ համայնքի նկատմամբ հոգածու վերաբերմունքի համար:

Նորին Սրբությունն իր խոսքում անդրադարձ կատարեց քույր Եկեղեցիների և միջեկեղեցական կազմակերպությունների հետ Հայոց Եկեղեցու հարաբերություններին, նաև Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի աղետալի հետևանքներին և Հայաստանի առջև ծառացած ծանր մարտահրավերներին: Հայոց Հովվապետը կարևոր նկատեց բարեկամ երկրների և միազգային հանրության կողմից գործադրվող ջանքերն ի նպաստ տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման, Բաքվում անազատության մեջ պահվող գերիների ազատ արձակման:

Ապրիլի 30-ին **«Հովնանյան» վարժարանի սաներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հովնանյան» վարժարանի (Նյու Ջերսի, ԱՄՆ) ավարտական լսարանի սաներին:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց վարժարանի սաներին՝ ընդգծելով, որ ավանդույթ դարձած այցելությունները Հայաստան լավագույն հնարավորությունն են ընձեռում հաղորդ դառնալու հայրենական կյանքին, հոգևոր ժառանգությանն ու սրբություններին: Նորին Սրբությունը վստահեցրեց, որ այցն անջնջելի դրոշմ է թողնելու պատանիների հոգում՝ զորացնելով ազգային ոգին ու գիտակցությունը:

Վեհափառ Հայրապետը աշակերտներին մասնավորապես պատգամեց ջանասիրությամբ շարունակել իրենց ուսումնառությունը, հասակ առնել իբրև ազգի արժանավոր զավակներ՝ ամուր պահելով կապը Մայր Եկեղեցու և հայրենիքի հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծապես կարևորեց Սփյուռքի համայնքներում ազգային ինքնությունը զորացյալ պահելու առաքելությունը: Այս առիթով Հայոց Հայրապետը նաև իր գնահատանքը բերեց «Հովնանյան» վարժարանի պաշտոնեությանը, մանկավարժներին՝ նվիրյալ աշխատանքի համար, ինչպես և սաների ծնողներին՝ հայեցի կրթություն ապահովելու և եկեղեցասեր սերունդ դաստիարակելու համար:

Մարսելի համազգային դպրոցի, Փարիզի «Սուրբ Մեսրոպ» Արաբյան դպրոցի և դպրոցասեր միության վարժարանի աշակերտներն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Ապրիլի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Մարսելի համազգային դպրոցի, Փարիզի «Սուրբ Մեսրոպ» Արաբյան դպրոցի և դպրոցասեր միության վարժարանի աշակերտներին՝ ուղեկցությամբ ազգային բարերար տիար Սարգիս Պետոյանի:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց ձևավորված գեղեցիկ ավանդույթի առիթով, որի շնորհիվ Հայոց ցեղասպանության հիշատակի օրերին Ֆրանսիայում գործող հայկական վարժարանների սաներն ամեն տարի այցելում են Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Նորին Սրբությունը կարևորեց նմանօրինակ այցելությունները հայրենիք, որոնք հնարավորություն են ընձեռում պատանի հայորդիներին հաղորդ դառնալու հայրենի իրականությանը, ծանոթանալու հոգևոր-մշակութային ժառանգությանն ու արժեքներին՝ զորացնելով իրենց հավատն ու ազգային ինքնությունը:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը հորդորեց պատանիներին ջանասիրությամբ շարունակել ուսումը և ձեռք բերած գիտելիքներով, իբրև ազգի արժանավոր զավակներ, օգտակարություն բերել հայ ժողովրդին ու հայրենիքին: Նորին Սրբությունը նաև իր գնահատանքը հայտնեց բարերարին, վարժարանների տնօրեններին, ուսուցչական անձնակազմին և հոգաբարձուներին՝ Հայաստան և Մայր Աթոռ այցելությունների կազմակերպման համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Պահպանիչ» աղոթքով իր օրհնությունը բաշխեց ֆրանսահայ աշակերտներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Ֆրանցիսկոս Պապի վախճանման առիթով

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի վախճանման առիթով:

«Երջանկահիշատակ Ֆրանցիսկոս Պապը խոնարհ, քաջ ու բարի հովիվ էր, որ հավատարմորեն քայլում էր մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետքերով: Նա ստանձնեց պապական բարձր ու պատասխանատու առաքելությունը դժվարին ժամանակներում և վկայեց Ավետարանը՝ մշտապես պաշտպան լինելով արդարության ու խաղաղության, առանձնակի ուշադրություն ու խնամք բերելով կարիքավորներին, ինչպես նաև՝ իր կարևոր ներդրումը բերելով միջեկեղեցական հարաբերությունների զորացմանը:

…Առանձնակի մխիթարությամբ ենք անդրադառնում, որ Սրբազան Պապը մշտապես իր աղոթքն էր հնչեցնում պատերազմներով և անարդարությամբ վիրավորված աշխարհի՝ ի մասնավորի արցախյան պատերազմի ծանր հետևանքները կրող մեր ժողովրդի համար»,— ասված է Վեհափառ Հայրապետի ցավակցագրում:

Նորին Սրբությունն ընդգծել է, որ հայ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Սուրբ Պետրոսի տաճարում մատուցված Սուրբ Պատարագը, Սուրբ Գրիգոր Նարեկացու հռչակումը որպես Տիեզերական Եկեղեցու Վարդապետ, ինչպես և Սրբազան Քահանայապետի այցը Հայաստան: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր աղոթքն է վերառաքել առ Աստված՝ երջանկահիշատակ Սրբազան Պապի հոգու հանգստության և խաղաղության, ինչպես և ողջ Կաթոլիկ Եկեղեցու հոգևոր դասի և հավատացելոց մխիթարության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց Ֆրանցիսկոս Պապի վերջին հրաժեշտի և հուղարկավորության արարողություններին

Այսն թվականի ապրիլի 26-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարի հրապարակում տեղի ունեցավ Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետ երջանկահիշատակ Ֆրանցիսկոս Պապի վերջին հրաժեշտի և հուղարկավորության արարողությունը, որին ներկա գտնվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հուղարկավորության արարողությանը մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ընթացքում տարբեր Եկեղեցիների պետեր և ներկայացուցիչներ առիթ ունեցան իրենց աղոթքը բարձրացնելու ի Տեր ննջած Ֆրանցիսկոս Պապի հոգու խաղաղության համար:

Նախորդ օրը Սուրբ Պետրոսի տաճարում Ամենայն Հայոց Հայրապետը մասնավոր աղոթք բարձրացրեց Ֆրանցիսկոս Պապի հոգու հանգստության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցող պատվիրակության կազմում էին Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Խաժակ

արքեպիսկոպոս Պարսամյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Մայր Աթոռը դատապարտում է Վարշավայում կազմակերպված «Արևմտյան Ադրբեջան» խորագրով ցուցահանդեսի կազմակերպումը

2025 թվականի ապրիլի 8-ին Վարշավա քաղաքում Լեհաստանում Ադրբեջանի դեսպանության կողմից կազմակերպված «Արևմտյան Ադրբեջան՝ մեր մշակութային հիշողության մեջ» խորագրով ցուցահանդեսը հերթական դրսևորումն է Ադրբեջանի կողմից իրականացվող կեղծ քարոզչության, որն արտահայտությունն է Հայաստանի Հանրապետության նկատմամբ վերջինիս տարածքային նկրտումների և հայ ժողովրդի բազմադարյա հոգևոր և մշակութային ժառանգության յուրացման ձգտումների:

Խստագույնս դատապարտելի են Ադրբեջանի կողմից պատմությունը վերաշարադրելու գործողությունները, Հայաստանի և Արցախի տարածքում գտնվող հայկական բնակավայրերը, սրբավայրերն ու պատմամշակութային արժեքները «ադրբեջանական» կամ «ալբանական» ներկայացնելու փորձերը:

Նման մերժելի նախաձեռնությունները ոչ միայն չեն նպաստում տարածաշրջանում խաղաղության հաստատմանը, այլև չեզոքացնում են ժողովուրդների համերաշխության և խաղաղ գոյակցության միջավայրի ձևավորման բոլոր քայլերը: Մշակույթը պետք է լինի կամուրջ ժողովուրդների միջև, ոչ թե քաղաքական շահախնդրության գործիք:

Կոչ ենք անում միջազգային հանրությանն ու կազմակերպություններին, դիվանագիտական շրջանակներին և մշակութային կառույցներին հստակ գնահատական տալ պատմության ու մշակույթի նկատմամբ կատարվող այսպիսի կեղծարարություններին և խստորեն դատապարտել Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացվող նմանօրինակ ոտնձգությունները:

Արցախի հոգևոր և մշակութային ժառանգության հարցերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գրասենյակ
18. 04. 2025 թ.

Քրիստոսի հրաշափառ հարությունը

Հարցազրույց Տեր Գրիգոր քհն. Գրիգորյանի հետ

— Տե՛ր հայր, Ավետարաններում ի՞նչ դրվագներ կան, որոնք վկայում են Քրիստոսի հրաշափառ հարությունը: Մեզ՝ քրիստոնյաներիս համար Հիսուսի հարությունը հարցեր չի առաջացնում, բայց անհավատներին ինչպե՞ս փաստարկել հարության իրողությունը:

— Նախ՝ Տեր Հիսուս Քրիստոս Ինքն է կանխասում Իր խաչելության, հարության ու համբարձման մասին (Մատթ. 16:21), ապա՝ արդեն հարության իրողության նկարագրությանը հանդիպում ենք բոլոր չորս Ավետարաններում (Հովհ. 20:1—18, Մատթ. 28:1—8, Մարկ. 16:1—8, Ղուկ. 24:1—10): Իսկ առաքելական թղթերում դրա մասին խոսում են Պետրոս առաքյալը (Գործք 2:31—36), Պետրոս և Հովհաննես առաքյալները (Գործք 4:33), Պողոս առաքյալը (Ա Կորնթ. 15:3—8) և այլք:

Ինչ վերաբերում է հարության իրողությունն անհավատներին փաստարկելուն, ապա պիտի ասեմ, որ փնտրողները պատմական վկայություններ կարող են գտնել ինչպես առաջին դարում Հռոմեական կայսրությունում ապրած պատմաբանների, այնպես էլ ավելի ուշ շրջանի գիտնականների ուսումնասիրություններում:

— Հիսուսի հարության փաստարկ է համարվում նաև Թուրինյան սավանը: Ըստ ուսումնասիրողների՝ այն մարմինը, որին փաթաթված է եղել սավանը, պատկանել է աստվածային էության, և սավանի պատկերն ստեղծվել է հենց հարության պահին: Ի՞նչ կառանձնացնեք դրա վերաբերյալ:

— Թուրինյան սավանը համարվում է Քրիստոսի պատանաշորը, և դրա հետազոտությունները լրացնում են ավետարանական նկարագրությունները (Մատթ. 27:27—31, Մարկ. 15:16—20, Ղուկ. 22:63—65, Հովհ. 19:1—5)՝ մանրամասն պատկերացում տալով այն սարսափելի չարչարանքների մասին, որոնց ենթարկվել է այդ սավանով փաթաթված մարմինը: Ես կներկայացնեմ փորձագետների եզրակացությունից մի քանի հատված, որ ավելի լավ պատկերացնեք, թե իրականում խոսքն ինչ սարսափելի չարչարանքների մասին է: Մարմինը՝ ուսերից մինչև ոտքերը, պատված էր դաժան խարազանման հետևանքով առաջացած բազմաթիվ արնահոսող վնասվածքներով, որ հասցվել էին մետաղյա ծանր գնդերով, մեխերով կամ ոսկրե ծայրակալներ ունեցող մտրակներով, որոնք միսը պատռելով պոկում էին ոսկորից: Ընդհանուր առմամբ՝ հաշվվում է եռածայր մտրակի հարվածից առաջացած 59 պատռված վերք՝ ամեն մեկը մոտ 4 սմ երկարությամբ, երկծայր մտրակի 18 և մեկ ծայրով մտրակի 21 վերք: Այս ամենին գումարեք Նրա գլխին դրված փշե պսակը, որին էլ փայտով հարվածելու հետևանքով գլխի վերին հատվածում հաշվվում է 30 արնահոսող անցք: Ավելացրեք նաև ծանր խաչը կրելուց բզկտված մարմնին մնացած լայնադիր գերանի հետքն աջ ուսին, ձախ թիակի ներքևի հատվածի մեծ վնասվածքը, որը նույնպես առաջացել էր գերանի հարվածից, երբ դա կրողը, ծանրությունից ուժասպառ, ծնկների վրա էր ընկել՝ վնասելով նաև ծնկները, և կստանաք այն հոգեցունց, սարսափազդու պատկերը, որ կար արդեն մինչ խաչի վրա չարչարվելը:

Այսպիսով՝ Թուրինյան սավանը Փրկչի չարչարանքների ամենահայտնի նյութեղեն ապացույցն է:

— Գիտությունը՝ մասնավորապես պատմագիտությունը, ի՞նչ է ասում Քրիստոսի հարության վերաբերյալ: Պատմական իրողությունը հաստատող ի՞նչ հնագույն վկայություններ և հիշատակություններ գոյություն ունեն:

— Իմ հոգևոր եղբայրը՝ Տեր Ադամ քհն. Մակարյանը, իր հեղինակած «Քրիստոնեության իսկությունը» գրքում հանգամանալից անդրադարձել է այս հարցին, ուստի ես ուղղակի կմեջբերեմ այնտեղից մի հատված. «Քրիստոսի Հարության մասին է պատմում Ավետարանում նկարագրված դեպքերի ժամանակակից, հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսը: Նա երբեք էլ Քրիստոսի համակիրը չի եղել, սակայն իբրև պատմիչ՝ սերունդներին հաղորդել է այս դեպքի մասին:

Հովսեփոս Փլավիոսն իր «Հրեական հնություններ» գրքում նշում է, որ հրաշքներ գործող և մեծ իմաստության տեր մի մարդ՝ Հիսուս Քրիստոս անունով, եթե միայն կարելի է նրան մարդ անվանել, հրեա առաջնորդների սադրանքով Պիղատոսի կողմից խաչվեց, Քրիստոսի հետևորդները երկմտեցին, բայց Քրիստոս երրորդ օրը նորից կենդանի հայտնվեց նրանց:

Հաջորդ պատմիչը հույն Հերմիդիոսն է, որ Հրեաստանի կառավարիչների պաշտոնական կենսագիրն է եղել և գրել է նաև Պիղատոսի կենսագրությունը:

Նրա վկայություններն արժեքավոր են հատկապես նրանով, որ նա Քրիստոսի Հարության ժամանակ մոտ է գտնվել այդ վայրին, երբ ուղեկցելիս է եղել Պիղատոսի օգնականներից մեկին: Նա հայտնում է, որ գերեզման գնալիս տեղանքը հանկարծակի խիստ լուսավորվել է, ամպրոպի ձայն է լսվել ոչ թե երկնքում, այլ երկրի վրա, ու երբ իրենք մոտեցել են գերեզմանին, թաղված մարդու մարմինն այլևս գերեզմանում չի եղել:

Քրիստոսի Հարության մասին պահպանված մեկ այլ գրավոր հիշատակության հեղինակը Պիղատոսի մտերիմ բարեկամը և անձնական բժիշկն է՝ իր ժամանակի ականավոր մարդկանցից մեկը, սիրիացի՝ Էյշու անունով: Այս հանրահայտ բժիշկը մեծ հեղինակություն էր վայելում Արևելքում, հետո նաև՝ Հռոմում, թողել է բժշկագիտական աշխատություններ, որոնք մեծ նշանակություն են ունեցել գիտության մեջ: Գիտնականները համարում են, որ նա՝ որպես բժիշկ, արժանի տեղ է գրավում Հիպոկրատի, Գալենի կողքին, իսկ որպես կազմախոս՝ Լեոնարդո դա Վինչիի: Պիղատոսի հանձնարարությամբ այս բժիշկն իր հինգ օգնականներով Հարությանը նախորդող երեկոյից գտնվել է Քրիստոսի գերեզմանի մոտ: Իմանալով Քրիստոսի Հարությանը վերաբերող մարգարեությունների մասին՝ բժիշկն ու իր օգնականները դրանով հետաքրքրված էին նաև որպես գիտնականներ: Բայց ահա տեսեք, թե նա ինչ է գրում. «Մենք բոլորովին չէինք հավատում, որ մեռածը կարող է հարություն առնել: Բայց Նա, իրոք, հարություն առավ, և մենք դա տեսանք մեր սեփական աչքերով»: Նշվում են նաև Քրիստոսին ժամանակակից այլ հեղինակների աղբյուրներ, որոնցում խոսվում է Քրիստոսի Հարության մասին՝ Եպիփան Ափրիկեցի, Եվսեբիոս Եգիպտացի, Սարդոնիոս Պանիդոր, Հիպոլիտոս Մակեդոնացի, Ամոն Ալեքսանդրացի, Սաբելին Հույն, Իսահակ Երուսաղեմացի և ուրիշներ»:

— Տե՛ր Գրիգոր, Քրիստոսի հարությունը կարո՞ղ է լինել հավիտենական կյանքի գոյության կամ մարդու մարմնավոր հարության օրինակ, թե՞ դա միայն Աստվածորդու դեպքում է և եզակի օրինակ է: Քրիստոսից առաջ հարության ի՞նչ նախօրինակներ կան Աստվածաշնչում:

— Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունից առաջ մահվանից հառնելու դեպքերի հանդիպում ենք ինչպես Հին Կտակարանում, երբ, օրինակ, Եղիա մարգարեն հարություն է տալիս սիդոնացի այրու որդուն (Գ Թագ. 17:17—24), կամ Եղիսե մարգարեն՝ սոմնացի կնոջ մանկանը (Դ Թագ. 4:18—38), այնպես էլ Նոր Կտակարանում՝ արդեն Մարդացյալ Աստվածորդու ձեռամբ՝ Հայրոսի աղջկա (Մատթ. 9:18—26), Նայինցի այրու որդու (Ղուկ. 7:11—16), Ղազարոսի հարությունը (Հովհ. 11:1—45) և այլն: Այս բոլոր օրինակները, անշուշտ, վկայում են և՛ հավիտենական կյանքի գոյության, և՛ մեռյալների՝ Քրիստոսի փառավոր Երկրորդ գալստյան ժամանակ մարմնով հարություն առնելու մասին, ինչպես որ խոստացել է Մարդասեր Աստված (հմմտ. Հովհ. 6:39, 40, Մատթ. 22:23—31)

— Ի՞նչ խորհուրդ ունի Հիսուսի հանձնարարություն-պատգամն աշակերտներին հարությունից հետո:

— Մատթեոսի Ավետարանում Ձեր նշած հանձնարարություն-պատգամը (Մատթ. 28:18—20) հիշատակվում է որպես Տիեզերական առաքելություն, որը Քրիստոսի կողմից փոխանցվում է բոլոր ժամանակների Իր հետևորդներին, և Սուրբ Եկեղեցու սպասավորներն այդ պատգամը կատարում են ամբողջովին, որը ներառում է Մկրտությունը, Խոստովանությունը (Հովհ. 20:21), քարոզչությունը և Եկեղեցու մյուս խորհուրդները: Իսկ հավատացյալներն իրենց խոսք ու գործով, ապրած կյանքով պետք է խոստովանեն հավատը, սերն ու նվիրվածությունն առ Աստված և այդկերպ կատարած լինեն իրենց քրիստոնեական առաքելությունը:



— Քրիստոսի հարություն առած մարմինը նո՞ւյնն էր, թե՞ տարբեր էր այն մարմնից, որ նրան էր պատկանում մարդեղացած ժամանակ:

— Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետությունը սովորեցնում է, որ Քրիստոսի մարմինը անապական էր ինչպես հարությունից առաջ, այնպես էլ հարությունից հետո, որովհետև Նա աստվածային զորությամբ ծնունդ առավ միայն մեկ ծնողից, և «Նրա մարմինը ապականություն չտեսավ» (Գործք 2:31):

— Սուրբ Գրքում Հիսուսի մահը ներկայացվում է որպես Աստծո նախախնամություն՝ մարդկությանը փրկագնող մահ: Հիսուսը խաչվեց մարդկության մեղքերի թողության համար, Աստված զոհեց Իր Որդուն, որ փրկի մարդկությանը: Ի՞նչ կասեք այդ մասին:

— Աստծու Խոսքը սովորեցնում է, որ «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. 3:16): Սերն է արարչագործության հիմքը. Աստված արարեց մարդուն՝ սիրուց մղված, որպեսզի կիսի նրա հետ այն երանությունը, որում Ինքը գտնվում է հավիտենապես: Հետագայում հենց այդ սերը պատճառ դարձավ Աստվածորդու մարդեղության, մահվան ու հարության՝ հանուն մեզ, հանուն մեր փրկության մեղքի գերությունից ու մահվան ճիրաններից: Քանի որ մեղքն աշխարհ մտավ նախամարդու՝ Ադամի պատվիրանազանցության պատճառով, միայն Երկրորդ Ադամը՝ կատարյալ մարդ-Աստված Քրիստոս, կարող էր փրկագնել մեզ այդ սարսափելի, մահաբեր հանցագործությունից:

Աստված մահվան մատնեց Իր Միածին Որդուն, Քրիստոս ինքնակամ գնաց այդ աներևակայելի զոհաբերությանը, որպեսզի մենք հնարավորություն ունենանք վերագտնելու մեր կորցրածը, կարողանանք ժառանգել հավիտենական կյանքը: Եվ մեր պատասխանն Աստծու այդ աննկարագրելի սիրուն պիտի լինի Նրա պատվիրաններին համապատասխան, քրիստոնեավայել կյանքը, ինչպես որ Տեր Հիսուս Քրիստոս է սահմանում՝ ասելով. «Ով իմ պատվիրաններն ընդունում և դրանք պահում է, նա՛ է, որ ինձ սիրում է» (Հովհ. 14:21):

— Զատիկը տոն է, որ խորհրդանշում է նաև աստվածային էություն ձեռք բերելը, աստվածային սիրո ուժը: Հիսուսի խաչելությունը անպարագիծ սեր է և անձնուրացություն: Կմեկնաբանե՞ք Հարության՝ Զատկի խորհուրդը:

— Սուրբ Պողոս առաքյալն ասում է. «Եթե մեռելների հարություն չկա, ապա և Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը» (Ա Կորնթ. 15:13—14): Այսինքն՝ Հիսուս Քրիստոսի հարությունը քրիստոնեության հիմքն է: Ըստ քրիստոնեական վարդապետության՝ Քրիստոսն է հավիտենական Զատիկը (Ա Կորնթ. 5:7), Աստծու Գառը, այն պատարագը, որի միջոցով մարդն ստանում է մեղքերի թողություն, հոգու բժշկություն, կյանք և հարություն: Հարուցյալ Քրիստոս խորտակեց մահվան իշխանությունը՝ հարություն տալով նաև մեզ, և բացեց Երկնային Արքայության ճանապարհն Աստծու բոլոր հավատարիմների համար: Այսինքն՝ Քրիստոսի հարությունը նաև հստակորեն ցույց տվեց մեր կյանքի իմաստն ու գլխավոր նպատակը:

— Զատկի տոնն ունի իր խորհրդանիշները, որոնցով զարդարվում են զատկական սեղանները: Կբացահայտե՞ք դրանք:

—Մեր զատկական սեղանների գլխավոր ուտեստներն են կարմիր գույնով ներկված ձուն, չամչով փլավը, ձուկն ու գինին: Սուրբ Գրիգոր Տաթևացին բացատրում է, որ ձուն օրինակն է ամբողջ աշխարհի, որի կեղևը նմանվում է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ երկիրն է, այսինքն՝ միջուկը, իսկ զատկական ձուն կարմիր ներկելը նշանակում է, որ ամբողջ աշխարհը մաքրվեց Քրիստոսի փրկչական արյամբ:

Կարմիր գինին խորհրդանշում է Քրիստոսի հեղված արյունը, ինչպես նաև այն խմիչքն է, որը Վերնատանը վերջին ընթրիքի ժամանակ Տեր Հիսուս խմել է Իր աշակերտների հետ և որով թրջել է հացը ու բաժանել նրանց՝ հաստատելով Հաղորդության խորհուրդը (Մատթ. 26:26—29):

Չամչով փլավի բրինձը խորհրդանշում է ժողովրդին, իսկ չամիչը Քրիստոսի աշակերտներն են:

Զատկական սեղանի խորհրդանիշ է նաև ձուկը. այն ընդհանրապես քրիստոնեության խորհրդանիշներից է, և առաջին դարում քրիստոնյաները միմյանց ճանաչել են հենց այդ նշանով: Սուրբ Տաթևացու վկայմամբ՝ Քրիստոս Իր աշակերտների հետ նաև ձուկ է կերել:

— Տե՛ր հայր, այս օրերին հայ ժողովուրդը նշում է Հարության տոնն ու Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցը: 1915-ը հայ ժողովրդի խաչելության խորհրդանշական տարեթիվն է: Առհասարակ, մեր ժողովրդի պատմական ճակատագիրը հիշեցնում է փշե պսակի քրիստոնեական ճանապարհը: Ինչպե՞ս կմեկնաբանեք այդ զուգորդությունը:

— Ապրիլի 24-ը մեր ազգային վշտի, դառնությունների, մեր ստացած դասերի հավաքական օրն է: Մեղքից խեղված, չարից կառավարվող աշխարհը խաչեց իր Փրկչին, և զարմանալի չէ, որ պիտի նույն վերաբերմունքին արժանացներ նաև խաչյալին սիրողներին: Միաստվածություն պաշտող Հայկի սերունդները հոգով ճանաչում էին Միակ ու Ճշմարիտ Աստծուն, հայոց հողը պահպանում էր Արդար Նոյի ոտնահետքերը, մեր աշխարհի վրա ծագող լույսն էլ ավելի էր պայծառացել Տիրոջ առաքյալների բերած ավետարանական լույսից, ուստի թշնամին մռնչում էր ու կրճտացնում ատամները (հմմտ. Ա Պետ. 5:8)՝ կամենալով ոչնչացնել քրիստոնեությունն առաջինն ընդունած ազգին:

4—5-րդ դարերից սկսած և մինչև այսօր Հայաստանն ու հայ ժողովուրդը ենթարկվում են ամենատարբեր ասպատակությունների ու նեղությունների: Աշխարհի ժողովուրդների մեջ մենք ասես Հոբ Երանելին լինենք. անդադար ենթարկվում ենք չարի փորձություններին, ցավալի կորուստներ գրանցում, բայց չենք մեռնում, քանի որ ունենք Աստծու պաշտպանությունն ու Ավետարանի հոգևոր սպառազինությունը, և վստահ եմ, որ ի վերջո Հոբի նման էլ մեծամեծ օրհնությունների ենք արժանանալու մեր տոկունության ու հավատարմության դիմաց:

— Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝ Արփինե ԻՇԽԱՆՅԱՆԻ

Հայոց ցեղասպանություն — 110

Խոսում են փաստերն ու վկայությունները

20-րդ դարասկզբին տեղի ունեցած մեծագույն ոճրագործությունը Թուրքիայի կողմից պետականորեն կազմակերպված և իրագործված հայ ժողովրդի ցեղասպանությունն է. «....Ես չեմ կարծում, որ համաշխարհային պատմության մեջ երբևէ իրագործվել է ավելի համընդհանուր ու արմատական նախճիր, քան այն, ինչ այժմ տեղի է ունենում մեր տարածաշրջանում, և ոչ էլ հավատում եմ, որ մարդկային ուղեղն ի զորու է հղանալ ավելի ահավոր ու սատանայական ծրագիր»,— գրել է Թուրքիայում ամերիկացի հյուպատոս Լեսլի Դևիսը Հենրի Մորգենթաուին 1915 թ. հուլիսին Խարբերդից:

Անսպառ են Հայոց ցեղասպանության և դրա կանխամտածված լինելու վերաբերյալ փաստաթղթերն ու վկայությունները. մինչև այսօր ուսումնասիրությունները շարունակվում են: Ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, ուսումնասիրելով անգլիական արխիվները, առանձնացրել է 1915 թ. հունվարի վերջերին Օսմանյան Թուրքիայում կազմակերպված մի գաղտնի խորհրդակցություն, որին մասնակցել են 5 հոգի՝ ներքին գործերի նախարար Թալեաթը, «հատուկ կազմակերպության» ղեկավարներ Բեհաեդդին Շաքիրը և դոկտոր Նազըմը, հասարակական անվտանգության վարչության պետ, հետագայում՝ Կոստանդնուպոլսի նահանգապետ Իսմայիլ Ջանֆոլադը, օսմանյան բանակի գլխավոր շտաբի քաղաքական վարչության պետ գնդապետ Սեյֆին: Խորհրդակցությանը՝ որպես գրագիր, մասնակցել է նաև գնդապետ Էսադը, որը և հետագայում իր գրի առած փաստաթուղթը հանձնել է բրիտանացիներին: Այս փաստաթղթը ներառում է 10 կետից բաղկացած որոշումների ցանկ, որը հայտնի է «10 պատվիրաններ» անունով: Դրանք հետևալն են՝

1. Համաձայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կանոնակարգի 3-րդ ու 4-րդ կետերի՝ փակել բոլոր հայկական միությունները և ձերբակալել բոլոր նրանց, ովքեր երբևիցե գործել են կառավարության դեմ, և ուղարկել նրանց այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Բաղդադը կամ Մոսուլը, և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ տեղում:

2. Բռնագրավել զենքերը:

3. Համապատասխան ու հատուկ միջոցներով գրգռել մահմեդականներին հայերի դեմ. այնպիսի վայրերում, ինչպիսիք են՝ Վանը, Էրզրումը, Ադանան, որտեղ հայերը, փաստորեն, արդեն արժանացել էին մահմեդականների ատելությանը, հրահրել կազմակերպված կոտորածներ, ինչպես ռուսները դա արեցին Բաքվում:

4. Էրզրումի, Վանի, Մամուրեթուլ-Ազիզի ու Բիթլիսի նահանգներում ժողովրդին թողնել գործադրումը, ի հակառակ դրան՝ այնպիսի տեղերում, ինչպիսիք են՝ Ադանան, Սվազը, Բուրսան, Իզմիրը և Զմյուռնիան, ակտիվորեն օգնել մահմեդականներին ժանդարմերիայով (զինված ուժերով):

5. Իրականացնել միջոցառումներ՝ մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և ուսուցիչներին ոչնչացնելու համար և թողնել աղջիկներին ու երեխաներին՝ մահմեդական դարձնելու նպատակով:

6. Տեղահան անել բոլոր այն ընտանիքներին, որոնք կփրկվեն, և իրականացնել միջոցառումներ՝ նրանց կապերն իրենց ծննդավայրերի հետ կտրելու համար:

7. Հայ պաշտոնյաներին լիովին հեռացնել բոլոր պետական գերատեսչություններից կամ պաշտոններից, քանի որ նրանք կարող են լրտեսներ լինել:

8. Օգտագործելով համապատասխան միջոցներ՝ սպանել բանակում գտնվող բոլոր հայերին՝ դրա իրականացումը թողնելով զինված ուժերին:

9. Բոլոր գործողություններն ամենուրեք սկսել միաժամանակ՝ այդպիսով ժամանակ չթողնելով պաշտպանական միջոցառումների նախապատրաստմանը:

10. Ուշադրություն դարձնել այս հրահանգների հույժ գաղտնի պահպանմանը, դրանք հայտնի չպետք է լինեն 2—3 հոգուց ավելի մարդկանց (Vahakn N. Dadrian, The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians, Holocaust Genocide Studies (1993) 7 (2): 173—201):

Անդրադառնանք 1915 թ. գիշատիչների խորհրդակցությանը: Սա հավաստումն է ցեղասպանության կանխամտածվածության գնահատման առաջին մակարդակի՝ փաստաթղթերի առկայության: Բացի դրանից՝ կիրարկվում է գնահատման՝ գործողությունների ընդհանուր վերլուծության մեթոդը: Եթե որոշումներն իսկ պահպանված չլինեին, գործողությունների հիման վրա կարելի կլիներ հասկանալ՝ ինչ ձեռագիր է գործում: Հետաքրքրություն է ներկայացնում Թալեաթ փաշայի «Սև ծոցատետրը», որտեղ վերջինս արձանագրել է Օսմանյան կայսրությունում բնակչության շարժերը: Նա այստեղ նշել է նահանգապետերից ստացված հարցումների պատասխանները, թե քանի՞ հայ կա այդ շրջանում, որքա՞ն են տեղահանվել, քանի՞սն են այլ շրջաններից եկել, որքա՞ն են մնացել: Անվարան կարելի է փաստել, որ քրիստոնյաներին ոչնչացնելու երիտթուրքերի գործողություններն իրականացվել են պետական հետևողական քաղաքականության օրակարգից ելնելով: Թուրք պաշտոնյաների նման հանցավորության վերաբերյալ շուրջ 600 գաղտնի փաստաթուղթ է վկայակոչում թուրք պրոֆեսոր Թաներ Աքչամը «Երիտթուրքերի՝ մարդկության դեմ հանցագործությունը. Հայոց ցեղասպանությունն ու ազգային զտումները Օսմանյան կայսրությունում» աշխատասիրության մեջ:

Այդ օրերին հայերի թվաքանակի վերաբերյալ հիմնական աղբյուր են թուրքական վիճակագրական տվյալները և Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի տվյալները: Մինչև 1878 թ. Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանն էր պատասխանատու հայ համայնքից հարկեր հավաքագրելու և Բարձր Դռանը փոխանցելու գործում: Սակայն Պատրիարքարանը չէր կարող ամբողջապես ստույգ տվյալներ ներկայացնել, քանի որ հայերի շրջանում առկա էին հարկային ծանր քաղաքականության, ինչպես նաև կրոնական հալածանքների տարածումը կանխելու հանգամանքները: Ցեղասպանված հայերի թվաքանակի ճշգրտման վերաբերյալ 1918 թ. դեկտեմբերին Թուրքիայի ներքին գործերի նախարարի նախաձեռնությամբ կազմվել է մի հանձնաժողով, որի ներկայացրած հաշվետվության մեջ ասվում է, որ 800 000-ի չափ հայեր են տեղահանվել ու կոտորվել: Մեկ այլ կարևոր տեղեկատվություն կա՝ քաղված Թալեաթի կողմից 1916, 1917 թթ. վիլայեթներ ուղարկված, կոդավորված հեռագրերի հաշվարկներից, որոնք նշում են 900 000-ից ավելի բռնագաղթի ենթարկված հայերի մասին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ 1915—1923 թթ. զոհվել է մեկուկես միլիոն հայ: Այդ թվի մեջ են մտնում նաև 1918 թ. Բաքվի, 1920 թ. Հայաստանի, 1922 թ. Իզմիրի կոտորածների ժամանակ զոհված հայերը: Խնդիրը, սակայն, միայն զոհերի թվաքանակը չէ, որի վերաբերյալ կարող են տարբեր տեղեկություններ լինել: Անկախ զոհերի թվաքանակից՝ եթե միտում է եղել ամբողջովին կամ մասնակի կերպով ազգի ոչնչացման, ապա դա որակվում է ցեղասպանություն: Այստեղ հարկ կա խոսելու ցեղասպանության և զանգվածային սպանության տարբերությունների մասին: Ցեղասպանության թիրախում ոչ թե մարդն է, այլ՝ ազգը: Տեսականորեն ցեղասպանություն կարող է կատարվել՝ առանց սպանության, երբ, օրինակ, որևէ խմբի անդամներին բաժանեն իրարից և տեղափոխեն այլ էթնիկ-ռասայական խումբ, որի հետևանքով տարիներ անց նրանք կդադարեն իրենց մշակույթի ու քաղաքակրթության կրողը լինել: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տասնյակ միլիոնավոր մարդիկ զոհվեցին, բայց դա չի եղել ցեղասպանություն:

Հայոց ցեղասպանության իրականացման ձևերից մեկն էլ եղել է բռնագաղթը: 1915 թ. մայիսի 26-ին Թալեաթը ներկայացրել է հայերի տեղահանության վերաբերյալ փաստաթուղթ, որի հիման վրա հաջորդ օրը հապճեպ ընդունվել է «Պատերազմի ժամանակ կառավարության գործողության դեմ դուրս եկողների համար ռազմական տեսանկյունից առնվելիք միջոցների մասին ժամանակավոր օրենք» (հայտնի է որպես «Տեղահանության օրենք»), որը հունիսի 1-ին տպագրվել է պաշտոնաթերթում և մտել ուժի մեջ: Առաջարկվում էր սկսել Զեյթունի հայերի տեղահանությունից, որտեղ արդեն տեղակայվել էին թուրքական կանոնավոր զորքերը: Զեյթունի բնակիչների տեղահանության դժնի և սրտամորմոք պատմությունները տեղ են գտել այդ օրերի ականատես Երվանդ Օտյանի «Անիծեալ տարիներ, 1914—1919 անձնական յիշատակներ» հուշագրության մեջ:

Թուրքական պատմագրության և խոսույթի մեջ հաճախ է օգտագործվում «հայերի բռնագաղթ» հասկացությունը, որով փորձում են համոզել, թե տեղահանություններ արել են Կովկասյան ռազմաճակատի երկայնքով ռուսական բանակին օգնող ապստամբ հայերի նկատմամբ: Իրականում ապստամբություններ տեղի չեն ունեցել. զինված ընդհարումները եղել են ինքնապաշտպանական դեպքեր՝ ի պատասխան օսմանյան իշխանությունների բռնությունների: Բացի այդ՝ հայերը տեղահանվել են ոչ միայն ռազմական գծից, այլ նաև Կենտրոնական Թուրքիայից՝ Կովկասյան ճակատից հարյուրավոր կիլոմետրեր հեռու, որտեղ նույնիսկ ինքնապաշտպանական դիմադրություն չի եղել:

1915 թ. տեղի է ունեցել սեգրեգացիա՝ սելեկցիա. ընտրվել են ոչնչացման ենթակա էթնիկ խմբերը: 1915 թ. Ուրֆայում 1500 հայ երիտասարդների երիտթուրքական իշխանություններն ուղարկեցին «թիկունքային աշխատանքների». նրանց դուրս բերելով քաղաքից՝ անխնա սպանեցին: Որոշակի խմբի դեմ միտման առկայությունը ևս կարևորագույն փաստ է իրողությունը ցեղասպանական բնութագրելու համար:

Հայերին միտումնավոր տեղափոխում էին անմարդաբնակ, անապատային այնպիսի վայրեր, որտեղ առկա անմարդկային պայմանները հանգեցնում էին սովի և համաճարակների՝ հազարավոր մարդկանց ոչնչացման պատճառ դառնալով: 1948 թ. ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայում կա հատուկ մի կետ, ըստ որի՝ տվյալ խմբի կենսագործունեության համար անհամատեղելի պայմանների ստեղծումը նույնպես համարվում է ցեղասպանական գործողություն: Պարզից էլ պարզ է, կույրի համար անգամ տեսանելի իրողություն է, որ հայերի տեղահանությունը ոչ թե տեղափոխություն էր, այլ՝ տեղափոխման միջոցով «աչքից հեռու» գեհենական վայրերում սպանություն: Սիրիական անապատում տեղի ունեցածը դրա վկայությունն է: Հարյուրավոր կիլոմետրեր մահվան ճանապարհով անցնող տարագիրների քարավանները Դեյր էզ-Զորում ու հարակից տարածքներում ենթարկվեցին զանգվածային կոտորածների:

20-րդ դարասկզբին կազմակերպված Հայոց ցեղասպանությունը վախի հետևանք էր, քանի որ թուրքական լծից ազատագրվել էին բուլղարները, ռումինները, սերբերը, հույները, և բալկանյան այս ազգերի հաջողություններն առաջադեմ արևմտահայերի համար պարարտ հող էր՝ օսմանյան ճնշումներից ազատվելու հույսը կյանքի կոչելու: Թուրքական հայաջինջ քաղաքականությունը, սակայն, ավելի առաջ անցավ: Այն ժամանակ, երբ օսմանյան բանակ զորակոչված հայերը ցույց էին տալիս իրենց հավատարմությունը, սվազցի Օհաննես Ագինյանը կյանքի գնով փրկում էր Էնվերին, հայ զինվորական բժիշկները նետվում էին ռազմաճակատ՝ փրկելու թուրքական բանակի զինվորների կյանքը, Էնվերը շքանշան էր շնորհում հրետանավոր Թորոսյանին, հայ զինվորների ճնշող մեծամասնությանը զինաթափում էին և տեղափոխում բանվորական վաշտեր, կանանց ու երեխաներին պարտադրում էին բռնի կրոնափոխություն, ձերբակալում քաղաքական-հասարակական գործիչների, իսկ որոշ շրջաններում կազմակերպվում էին դիմադրություններ՝ քիչ ուժերով ու պատրաստվածության թույլ մակարդակով, երբ դիմադրության հակառակ կողմում սպառազինված օսմանյան կանոնավոր բանակն էր՝ քրդական ու չերքեզական հրոսակախմբերով: Սամսունցուցիչ այդ օրերի մասին դոկտոր Բազարջյանին ուղղված նամակում Սիամանթոն գրել է. «Այս յուսահատութեան, զզվանքի, անկարելի ստրկութեան, պոռնիկ համակերպումի և իմ բառարանէս ու ձեր բառարանէն բացակայ ամեն հայիոյանքի արժանի օրերուն մէջ ձեր փոքրիկ քարթը իր մեծ սրտով ինծի մտածել տուաւ, թէ դեռ մարդեր, բարեկամներ կան: Բայց իմ ցաւէս առաջ, ցեղիս և ցեղիդ ցաւէն խօսիմ: Բովանդակ ծաղիկ հայ երիտասարդութիւնը կերան բորենիները, զինուոր տարին: Ահաւոր խուճապ: Գավառներէն մարդ չեն ձգեր: Մինչև 45 տարեկան.... Դէպի մահ, դեպի ստոյգ մահ: Ոչ պատերազմի միջի մահէն, այլ անօթութեան: Ամբողջ Թուրքիան անօթի է: Այլևս հայ և յոյն վաճառական կամ վաճառականութիւն չի մնաց: Կառավարութիւնը բոլորն ալ հաւաքեց, թալանեց, կողոպտեց և գրաւեց: Ամեն կողմ գրաւում, ոչ թե ալիւր կամ կերպաս, այլ ինչ որ գտնեն հայ-յոյն վաճառականին քով: Պոլիս և ամեն տեղ նոյն բանը»:

Երիտթուրքերի իրականացրած արյունարբու ջարդարարությունը պաշտոնապես դատապարտվել է հենց թուրքերի կողմից՝ 1919—1920 թվականներին. *Օսմանյան կայսրությունն է առաջինը ճանաչել Հայոց ցեղասպանությունը*: Հայերի տեղահանության ու կոտորածների մեղադրանքներով տեղի է ունեցել 63 տարբեր դատական գործընթաց, սակայն մեղադրյալները ազատ են արձակվել և հետագայում դարձել Թուրքիայի Հանրապետության հիմնադիր անդամները: 1919 թ. իրականացված թուրքական դատավարությունը միջազգային բարձրագույն ատյանում՝ տրիբունալում, հայ խաղաղ բնակչության դեմ կատարված ոճրագործության քողարկման ձևերից մեկն էր իրականում, որը պետական պատասխանատվության խնդիր էր դարձել: Այս դատավարությամբ կանխվեց հետագայում նմանատիպ դատավարությունների կազմակերպումը: Թուրքական պետությունն անձամբ որևէ պատիժ չսահմանեց ոճրագործների նկատմամբ (մեկ հոգի ընդամենը մահապատժի ենթարկվեց): Հետագայում հայ վրիժառուները փորձեցին դա իրականացնել: Նաև սխալ էր ինքնին դատական գործընթացը. տեղի ունեցածը ոչ թե քրեական հանցագործություն էր, այլ՝ քաղաքական, մանավանդ որ գլխավոր մեղավորները Օսմանյան պետության պաշտոնյաներ էին: Ուստի, ներկայումս պետք է խոսել ոչ թե Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման, այլ՝ վերաճանաչման, «արդար հիշողության» վերականգնման մասին:

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

1915 թ. մայիսին Զեյթունից բռնի տեղահանված հայերի մի խումբ. լուսանկարվելուց կես ժամ անց թուրքերը նրանց բոլորին հրկիզեցին և կոտորեցին: Նահանգապետը կանգնած է վերևի շարքում:

Ցեղասպանության մեր սուրբ նահատակների պատգամը

Ժողովուրդների պատմությունը լի է վերելքներով ու անկումներով, նվաճումներով և կորուստներով, հաղթանակներով ու պարտություններով, լուսավոր իրադարձություններով և անմխիթար ողբերգություններով: Ցավով եմ արձանագրում, որ ազգերի պատմության հոլովույթում մեր ազգային ողբերգությունները թերևս գերակշիռ են, մեր ժողովուրդը դարեր շարունակ իր արյան գնով մաքառել ու մինչև այսօր շարունակում է պայքարել՝ պահպանելու իր գոյությունը: Այս ամենի հետ մեծագույն կսկիծ է նաև այն, որ պետականորեն փորձ է արվում վարագուրել 20-րդ դարասկզբին մեր ժողովրդի մեծագույն ողբերգությունը՝ 1915-ի ցեղասպանությունը:

Ողբերգություն, որ հիմնովին հեղաշրջեց մեր պատմությունը:

Ողբերգություն, որի պատճառով հայությունը զրկվեց իր պապենական տնից, հողից ու երկրից:

Ողբերգություն, որի ընթացքում ավելի քան մեկուկես միլիոն հայ իր բնիկ երկրից աքսորվեց դեպի Դեր Զորի անապատներ և անմարդկային կերպով խոշտանգվեց ու նահատակվեց:

Ողբերգություն, որի ժամանակ հարյուր հազարավոր հայուհիներ լլկվեցին, բռնաբարվեցին թուրք և քուրդ ավազակախմբերի կողմից, շատերն էլ՝ որպես աղախիններ, տարվեցին նրանց տները:

Ողբերգություն, որի հետևանքով հազարավոր հայ մանուկներ որբացան, շատերը ծառայության տարվեցին և բռնությամբ դավանափոխ եղան:

Ողբերգություն, որի պատճառով մեր վանքերն ու եկեղեցիները, մեր ազգային-մշակութային հարուստ ժառանգությունը իսպառ ոչնչացան:

Ողբերգություն, որի հետևանքով մեր ավանդույթներից բազմաթիվ մասնիկներ վերացան, որովհետև վերացան այդ ավանդույթները կրող, պահող ու պահպանող հայ համայնքները:

Ի վերջո, ողբերգություն, որով Թուրքիան փորձեց իսպառ բնաջնջել հայությանը, անհետացնել մեր պատմական անցյալն ու հիշատակները:

Այո՛, այսօր՝ Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին, փորձում են մեզ կտրել մեր անցյալից, սևացնել ու թերագնահատել այն, քաղաքական հատուկ նպատակներ հետապնդելով՝ պատմական իրողությունները կեղծել, այլախեղված ներկայացնել հանրությանը: Մեր մեկուկես միլիոն զոհերի պատգամն է, սակայն, որ չմոռանանք մեր բռնազավթված պատմական հայրենիքը, չուրանանք իրենց նահատակությունը, ինքներս մեզ չխաբենք խաղաղության կեղծ քարոզներով ու թեզերով և ցեղասպանությունը սակարկության չդնենք՝ քաղաքական շահերին ի խնդիր:

Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Կաթողիկոս Գարեգին Բ-ն Հայոց ցեղասպանության 70-րդ տարելիցին Դեր Զորից հղած իր պատգամի մեջ հետևյալն էր շեշտադրում. *«Մենք անցյալն ու ներկան կամրջող սերունդ ենք, և ուզում եմ՝ բոլորդ էլ իմանաք, որ նա, ով մոռանում է իր մեռելներին, մանավանդ նրանց, ովքեր բնական մահով չեն մեռել, մանավանդ նրանց, որ ինձ ու ձեզ համար են մեռել, նրանք, որ իրենց մահը վճարեցին որպես գին իրենց հավատքի և իրենց ազգության, այդ բոլորը մոռացող կամ անտեսող մարդը անհավատարիմ է Աստծուն և մեր ազգության»:*

Իսկ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2001 թ. ապրիլի 24-ին՝ Դեր Զոր կատարած ուխտագնացության ժամանակ, իր խոսքում հաստատագրում էր. *«Եկել ենք ուխտի, սրբազան երդման: Եկել ենք ձեր՝ Քրիստոսի խաչակիցներիդ հազարավոր անհայտ անունների հիշատակումով մեր ուխտը առ Աստված հաստատելու, համազգային մեր միասնականությունը նորոգելու և մեր հավատը զորացնելու արդարության հաղթանակի հանդեպ»:*

Մեր նահատակներն այսօր մեզ պատգամում են նաև, որ ամուր կառչենք մեր ազգային ոգուն, որովհետև առանց այդ ոգու չենք կարող շարունակել մեր գոյության երթը: Այդ ոգին է, որ հերոսացնում է մեզ թե՛ որպես անհատներ և թե՛ որպես ազգ: Գարեգին Նժդեհը, անդրադառնալով ազգային ոգու կարևորությանը, ասում է. *«Ազգային ոգի — ահա՛ գերագույն հերոսը, միակը, մեր պատմության անիվը դարձնող, մեր հավաքական ճակատագիրը վարող հերոսը:*

Էապես միայն դա է գործում պատմության մեջ և պատմության համար: Անհատ հերոսները ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնավորողներն այդ ոգու:

Մեռնում են հերոսները՝ Մանվելները, Մուշեղները, Վարդանները, մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնավորումը գտնելով այլ հայերի մեջ՝ շարունակում է ապրել ու ներգործել:

Եվ հենց սրանում է հերոսների անմահությունը»:

Այսօր փորձ է կատարվում խամրեցնել, վերացնել հայ ոգին, և մեր նահատակները պատգամում են մեզ կառչել այդ ոգուն, որ մեր ներսի հերոսը չմեռնի, և հայությունը շարունակի ապրել ու արարել Աստծուց իրեն բաժին տրված երկրում:

«Կան ժողովուրդներ,— գրում է Կոստան Զարյանը,— որոնք նախապատմություն չունեն, և նույնիսկ այնպիսիները, որոնք պատմություն իսկ չունեն, կամ քիչ ունեն, կամ ունեցել են և այլևս չունեն: Պատմությունը հիշատակ չէ միայն, այլև տևականություն, այլև ներկան ձևակերպող կյանք և ապագան ուրվագծող հիմնական ազդակ»:

Մենք ոչ միայն նախապատմություն ունենք, այլև պատմություն, անցյալ ու ներկա, և անցյալի ու ներկայի իմաստուն զուգորդությամբ ի վիճակի ենք հստակ ձևակերպել մեր ապագա ընթացքը: Մեր ժողովրդի արմատները շատ խորն են, և դարերի ընթացքում բոլոր նրանք, ովքեր փորձ են արել մեզ արմատախիլ անել, ոչ միայն չեն կարողացել, այլև երբեմն փոշիացել են: Ճիշտ է, այդ ընթացքում մեր տոհմածառից ճյուղեր են ջարդվել ու վերացել, բայց շնորհիվ մեր ժողովրդի վճռակամության՝ մեր դարավոր ծառը նոր ճյուղեր է արձակել և շարունակում է պտղաբերել: Ուզո՞ւմ ենք հավատարիմ մնալ մեր արմատներին, ուրեմն պետք է ականջալուր լինենք մեր սուրբ նահատակների պատգամին՝

- թոթափել անտարբերությունը և տեր կանգնել մեր երկրին ու իրավունքներին,
- չմոռանալ իրենց գերմարդկային զոհաբերությունը և գործել հանուն մեր ազգային գոյության ամրացման ու բարօրության,
- հեռու մնալ դավադիր գաղափարախոսություններից, որոնք նպատակ ունեն ջլատել և կործանել մեր ժողովրդի դարավոր ծառը,
- հավատարիմ մնալ մեր պատմությանը, արժանապատվորեն ապրել մեր ներկան և հաստատուն ընթանալ դեպի ապագա:

Հետևաբար՝ ամուր կառչենք մեր ազգային ոգուն՝ միշտ գիտակցելով, որ առանց այդ ոգու՝ հեշտ կլինի կտրել մեր ծառի բունը և կասեցնել մեր գոյությունը:

Համախմբվենք մեր Սուրբ Եկեղեցու շուրջ, որից կարող ենք ստանալ ոգու ամրություն, անկոտրում կամք, ներկա դժվարությունները հաղթահարելու քաջություն և իմաստնություն: Հայ Եկեղեցին ոչ միայն կրողն ու փոխանցողն է ազգային ոգու, այլև պահապան հրեշտակն է մեր դարավոր պատմության, որ այսօր ենթարկվում է աղավաղման:

Ի վերջո, խնկարկենք և անմոռանալի պահենք մեր սուրբ նահատակների հիշատակը և ջանք չխնայենք, որ նրանց հանդեպ գործված ոճիրը արդար հատուցում ստանա:

Վարանդ (Հակոբ) ՔՈՐԹՄՈՍՅԱՆ

Հայոց ցեղասպանության հուշահամալիրի կառուցումը սերունդների ծանր պայքարի արդյունքն էր

Մեր ժողովրդի համար սրբազան ուխտատեղի է Ծիծեռնակաբերդի բարձունքում վեր խոյացող, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը, որը նաև արվեստի բարձրամակարդակ, եզակի ստեղծագործություն է: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը մեր ժողովրդի հոգու ճիչն է, նրա ոգեղեն ընդվզումն ու ցասումը՝ուղղված ցեղասպան ոճրագործների և անարդար ու անպատկառ աշխարհի դեմ: Այն համայն հայության պատմական հիշողության մարմնացումն է միաժամանակ, որ բարձրացել է ծանրագույն, համառ ու դժնդակ պայքարի շնորհիվ՝ ընդդեմ հայրենիքի ուրացման և պատմական հիշողության ոչնչացման:

Լռության պատնեշի խորտակումը

Մինչև 1960-ական թվականները Հայաստանում արգելանքի տակ էին Հայոց ցեղասպանության և կորուսյալ հայրենիքի հետ կապված ամեն ինչ, ամեն մի մասունք և հիշողության պատառիկ: Թուրքերը դա կարողանում էին վերահսկել Կրեմլի միջոցով, և նրանց հաջողվում էր զգալի ժամանակ: Սակայն սփյուռքահայությունն ամեն ջանք գործադրում էր, որ ցեղասպանությունը ճանաչվի և դատապարտվի մարդկության կողմից: Անմասն չէր նաև Խորհրդային Հայաստանի հայությունը, որքան էլ որ դա անհնարին էր թվում: Հայաստանի մտավորականությունը՝ նրա նվիրյալ և համարձակ մասը, գործում էր ընդհատակում, բայց ժամանակի հետ լռության ձայնը դարձավ բացահայտ. այլևս հնարավոր չէր հոգեկան անտանելի ցավը լռությամբ կրել: Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ծնունդը զորեղ հարված եղավ լռության պատնեշին: 1965 թվականից հետո, երբ սփյուռքի ջանքերով աշխարհում, այնուամենայնիվ, շատ թե քիչ մասշտաբով նշվեց Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը, Խորհրդային Հայաստանում ևս փոփոխություններ տեղի ունեցան հանրային գիտակցության և հոգեբանության մեջ: Երևանը նույնպես ընդվզեց, և լռության պատնեշը խորտակվեց 1965 թ. ապրիլքսանչորսյան հուժկու պոռթկումով ու համազգային երթով, որը ցնցող տպավորություն թողեց Խորհրդային Միությունում: Այսպես տապալվեց դարի դավադրությունը, որ ծրագրել և նյութել էին մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությունը իրագործած թուրք ոճրագործները, և աշխարհն իմացավ հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգության մասին առնվազն կես դար ուշացումով: Թուրք ոճրագործներին չհաջողվեց թաքցնել իրենց ճակատին դաջված ոճրագործություն-խարանը:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումը

Ոմանց համար գուցե զարմանալի թվա, բայց իրական փաստ է, որ խորհրդային Հայաստանի իշխանությունները նախօրյակին արդեն նախանշել էին Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի առիթով կատարվելիք աշխատանքների սցենարը: Դրան նաև նպաստել էին երկրի պետական մի շարք բարձր պաշտոններում հայրենանվեր մտավորականների նախաձեռնություններն ու միջնորդությունները:

Այսպես, դեռևս 1964 թ. հուլիսի 16-ին պատմաբան Ծ. Աղայանի (Մարքսիզմ-լենինիզմի հայկական մասնաճյուղի տնօրեն), Հ. Ինճիկյանի (ԳԱ-ի արևելագիտության ինստիտուտի սեկտորի վարիչ), Զ. Կիրակոսյանի (ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ) նախաձեռնությամբ և ստորագրությամբ գաղտնի նամակ է հղվում Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախագահությանը՝ ցեղասպանության հիսնամյա տարելիցը պատշաճ կերպով ոգեկոչելու կապակցությամբ: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարուբյանը վերոնշյալի կապակցությամբ 1964 թ. դեկտեմբերի 13-ին դիմում է հղում Մոսկվային՝ ԽՄԿԿ կենտկոմին: Դիմումում հիմնավորվում էր Առաջին համաշխարհային պատերազմի նահատակների հիշատակին Երևանում հուշարձան կառուցելու անհրաժեշտությունը: Կրեմլի ղեկավարների բարյացակամությունն ստանալու նպատակով չէին գործածվում «Հայոց ցեղասպանություն», անգամ «Մեծ եղեռն» հասկացությունները: Թույլտվություն ստանալուց հետո Երևանում ավելի վճռական են գործում: 1965 թ. մարտի 16-ին Խորհրդային Հայաստանի մինիստրների խորհուրդը որոշում է կայացնում եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու համար Երևանում կառուցել հուշահամալիր:

Հենց սկզբից հուշահամալիրի կառուցումը ձեռք է բերում համաժողովրդական և համազգային բնույթ ու նշանակություն: Խորհրդային Հայաստանի և սփյուռքի հայությունը քաջ գիտակցում էր, որ ծրագրվող հուշահամալիրով ճեղքվելու է դավադիր լռությունը:

Հուշահամալիրի կառուցումն անցնում է առանց էական խոչընդոտների և միջադեպերի: Շատերն էին ցանկանում անվճար աշխատել կառույցի շինարարության ընթացքում: Աշխատանքներն սկսվում են 1966 թ. սկզբից և տևում մինչև հաջորդ տարվա՝ 1967 թվականի աշուն: Կառույցի ճարտարապետներն էին Արթուր Թարխանյանը, Սաշուր Քալաշյանը, քանդակագործ Վան Խաչատուրը: Հուշահամալիրի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1967 թ. նոյեմբերի 29-ին ՀԿԿ կենտկոմի ողջ շքախմբի մասնակցությամբ:

Ծաղկեպսակներ տեղադրվելու արարողությունից հետո տեղի է ունենում համաժողովրդական ցույց, որից հետո ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը բոցավառում է հուշարձանի անմար կրակը:

Հուշահամալիրը զբաղեցնում է 4500 քմ տարածք: Ձախ կողմից ձգվում է 100 մետր երկարությամբ հուշապատը: Կենտրոնում գտնվում է 30 մետր տրամագծով հավերժության տաճարը՝ դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե մույթերով: Այցելուներին դեպի տաճարի սրահն ու հավերժական ջահն են առաջնորդում հարթակից իջնող անսովոր բարձր աստիճանները, որոնք կարծես պահանջում են խոնարհվել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի առջև: Քիչ հեռու վեր է խոյանում 40 մետր բարձրությամբ «Վերածնվող Հայաստան» անվանման հուշայունը:

Հուշահամալիրը՝ սրբազան ուխտատեղի

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը ոչ միայն Հայաստանի մայրաքաղաքի տեսարժան վայրերից է, այլև իսկական ուխտատեղի է հարյուրհազարավոր հայերի համար: Բացի ապրիլի 24-ից, երբ զանգվածային երթ է կատարվում դեպի հուշահամալիր վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, այստեղ երբեք այցելուների պակաս չի լինում ողջ տարվա ընթացքում՝անկախ եղանակային պայմաններից: Եղել են տարիներ, երբ հենց ապրիլի 24-ին հորդառատ անձրևի ու ձյան ներքո ժողովուրդը նույն հոծ շարքերով բարձրացել է Ծիծեռնակաբերդի սրբացած բարձունքը: Եվ աշխարհի որևէ վայրում այնքան ծաղիկ, ծաղկեփունջ կամ ծաղկեպսակ չեն դրվում, որքան այստեղ՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի պատվանդանին: Աշխարհի ողջ հայության և նրա համախոհների ու բարեկամների հայացքը մշտապես ուղղված է այս սրբացած համալիրին:

Եվ թերևս Հայաստանի Հանրապետության ներկա տարածքում միայն այս կետից նայելիս երևում է ոչ միայն ալեհեր Արարատը, այլև՝ ողջ Արևմտյան Հայաստանը՝ մինչև Եփրատ, Ճորոխ ու Տիգրիս: Ողջ հայությունն է այս կետից հիշում և հատուցում պահանջում՝ հայացքը հառած գալիք դարերին:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պ. գ. թ.

«Հայոց ցեղասպանության նահատակներ» սրբապատկերը

Ինչպես ցանկացած քրիստոնեական նահատակագրություն, այնպես էլ Հայոց ցեղասպանության մարտիրոսագրությունը, որքան էլ ցավալի, տառապալի և մարդկայնորեն աներևակայելի է, նույնքան էլ ծայրեծայր չարին ու բռնությանը, ագրեսիային ու մարդկային իրական ազատության սահմանափակմանը հակազդելու պատմություն և օրինակ է, եզակի օրինակ: Հայոց ցեղասպանության մարտիրոսագրությունը նաև հայերի՝ հանուն սեփական ինքնութենական, ազգային արժեքային համակարգի պայքարի հուժկու պատմություն և փաստ է:

Հայոց ցեղասպանության քրիստոնյա մարտիրոսների սրբադասման արարողությունը կատարվեց 2015 թ. ապրիլի 23-ին՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի կողմից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Տրդատի բաց խորանում: Մինչ բուն սրբադասման արարողությունը՝ ապրիլի 22-ի գիշերը, կատարվել էր Հսկման կարգ: Հսկումը նախագահել էր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իրենց մասնակցությունն էին բերել Հայ Եկեղեցու հոգևորականներ և հավատավորներ, Հայաստան ժամանած քրիստոնեական Եկեղեցիների հովվապետեր ու պաշտոնական պատվիրակություններ: Հսկման ընթացքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես հետևյալ խոսքն է հղել ներկաներին. «Տիրոջ կամքով վաղը՝ ապրիլի 23-ին, այս սուրբ տաճարի հովանու ներքո՝ հայոց առաջին քրիստոնյա արքայի՝ Ս. Տրդատի անունը կրող խորանի առջև, պիտի կատարենք սրբադասման արարողությունը Ցեղասպանության նահատակների՝ հայցելով սուրբ վկաների բարեխոսությունը ազգային և հոգևոր մեր կյանքի զորացման ու առաջընթացի համար..... Մեր ժողովուրդը պատմության ողջ ընթացքում հաճախ պատարագվեց նահատակության խորանի վրա՝ դառնալով աստվածապաշտության սքանչելի օրինակ: Ցեղասպանության տարիներին ևս մեր զավակների կրած նահատակության ու չարչարանքի պատմությունները որքան ցավ ու տրտմություն են պատճառում, նույնքան և ավելի՝ հավատքի մեջ ամրանալու և խիզախելու նոր խթան դառնում ամենքիս համար, ինչպես պարագան էր առաջին դարերի քրիստոնյաների»:

Օծվում են մասունքարանները, որտեղ տեղադրվում են Հայոց ցեղասպանության զոհերի մասունքները՝ Դեր Զորի անապատից, Կիլիկիո կաթողիկոսարանից բերված և Մայր Աթոռում 1965 թ. կառուցված ուխտի խաչքարի տակից հանված, իսկ մասնատուփերը կնքվում են հայրապետական կնիքներով: Ապրիլի 23-ի առավոտյան՝ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման բուն արարողությունից առաջ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվում է Սուրբ Պատարագ: Սրբադասման համար մշակված ծիսական արարողակարգի ընթացքում էլ հատուկ բանաձևով կատարվում է Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը: Հայտարարվում է, թե ո՛ր օրն են տեղի ունենալու նրանց հիշատակի տոնն ու ընդգրկումը եկեղեցական օրացույցում:

Սրբադասման արարողությունն սկսվում է Տերունական աղոթքով, թափորով, ընթերցվում է սրբադասելիների հավաքական վկայաբանությունը: Ապա կատարվում է «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի» շարականը, որից հետո ընթերցվում է Հայ Առաքելական Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի հռչակագիրը: Վերջինիս հետևած «Էջ Միածինն ի Հօրէ» շարականից, սուրբգրային ընթերցումներից (Սաղմ. ԼԳ. 1–6, Հռոմ. Ը. 31–39, Մարկ. Ժ. 35–45) հետո կատարվում են Հայոց ցեղասպանության նահատակների սրբապատկերի քողազերծումն ու օծումը՝ 112-րդ սաղմոսի և շարականների կատարմամբ ու աղոթքով: Սրբապատկերի օծումից հետո իրականացվում է նահատակների մասունքների խնկարկումը՝ Հայոց ցեղասպանության նահատակների «Հրաշացան պակուցմամբ» շարականից 3 տուն կատարելով, օրհնվում են մասունքարանները: Բացի Մեծ եղեռնի նահատակների մասունքներից՝ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողության առիթով հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բազմաթիվ մասունքներից դուրս բերվեցին հետևյալ 14 սրբությունները.

1. Սուրբ Գեղարդը,
2. Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը,
3. Կենաց փայտով խաչ-մասունքարանը,
4. Սկևռայի մասանց պահարանի կրկնօրինակը,
5. Աջը՝ Ս. Ստեփանոս Նախասարկավագի մասունքով,
6. Աջը՝ Ս. Հռիփսիմե կույսի մասունքով,
7. Աջը՝ Ս. Անանիա առաքյալի մասունքով,
8. Աջը՝ Ս. Սահակ Պարթև Հայրապետի մասունքով,
9. Աջը՝ Ս. Սարգիս Զորավարի մասունքով,
10. Աջը՝ Ս. Գևորգ Զորավարի մասունքով,
11. խաչ-մասունքարանը՝ Ս. Թադեոսի և Ս. Սանդուխտ կույսի մասունքներով,
12. խաչ-մասունքարանը՝ Ս. Հովհաննես Մկրտչի մասունքով,
13. մասունքարանը՝ Ս. Գրիգոր Նարեկացու և այլ սրբոց մասունքներով,
14. Զեյթունի Ավետարանը:

Արարողությունն սկսվեց ժամը 17:00-ին և ավարտվեց 19:15-ին՝ խորհրդանշելով 1915 թվականը: Աշխարհի տարբեր անկյուններում գտնվող հայկական եկեղեցիներում 100 անգամ հնչեցվեցին եկեղեցիների զանգերը: Ապա դրան հետևեց լռության րոպեն: Արարողությունն ավարտվեց Տերունական աղոթքի երգեցողությամբ և Մայր տաճարի զանգերի ղողանջներով ու թափորով:

Եկեղեցական հիշատակության տոնացուցային օր սահմանվեց ապրիլի 24-ը՝ «Յիշատակ սրբոց նահատակաց, որք կատարեցան յընթացս ցեղասպանութեան Հայոց վասն հաւատոյ և վասն հայրենեաց»՝ իր հաստատուն տեղը գտնելով եկեղեցական օրացույցում և փոխարինելով Հայոց ցեղասպանության զոհերի հոգեհանգստյան կարգին:

Տիգրան Բարխանաջյանի «Հայոց ցեղասպանության նահատակներ» սրբապատկերը

Ապրիլի 24-ին օծված սրբապատկերներից մեկը (նկարիչ՝ Տիգրան Բարխանաջյան) դրվեց Ծիծեռնակաբերդում՝ Անմար կրակի մոտ կատարված Հայոց ցեղասպանության նահատակների Հիշատակի կարգի ընթացքում: Ապա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ, և Մայր Տաճարի հարևանությամբ գտնվող Աղոթքի և ուխտի խաչքարի մոտ, նախագահությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Բարեխոսական կարգ:

Այսօր Հայոց Մեծ եղեռնի նահատակների սրբապատկերը պահպանվում է Մայր Աթոռի Ռուբեն Սևակի անվան թանգարանում, կրկնօրինակները կարելի է տեսնել Հայ Առաքելական Եկեղեցու՝ Հայաստանի և Սփյուռքի տարբեր եկեղեցիներում: Նկարիչ Տիգրան Բարխանաջյանի հեղինակած սրբապատկերի վերարտադրմամբ պատրաստվել են նաև մասանց պահարաններ, խաչվառներ, սրբանկարի պատկերագրության սկզբունքը պահվել է այլ նկարիչների՝ սրբադասման արարողության համար պատրաստված գործերում:

Նկարչի հետ հարցազրույցի ընթացքում պարզվեց, որ Գարեգին Բ Կաթողիկոսը, որպես նախապայման, պատվիրել է, որ սրբանկարը չպետք է ահասարսուռ պատկերներ ունենա, պետք է խորհրդանշի հարություն, զարթոնք, վերածնություն: Պատկերը մտահղացվել է Ծիծեռնակարբերդ այցելած ժամանակ, երբ փորձում էր նախնական էսքիզի համար մեկնակետ ընտրել: Թղթապանակն ու մատիտը ձեռքին՝ խորհրդածում էր՝ ինչից սկսել, ինչպես նկարել, և հանկարծ Լուսինե Զաքարյանի կատարմամբ՝ «Սուրբ-Սուրբ»-ի հնչյունների ներքո (որի ձայնագրությունը բարձրախոսով լսելի է Ծիծեռնակաբերդում) մի բան է սևեռվել մտքում՝ Պատարագ. «Մտածեցի, որ նկարի գաղափարական հիմքում Պատարագը պետք է լինի ու ըստ որում՝ երկու իմաստով. մի դեպքում՝ որպես ծիսակատարություն, որին ժողովուրդը մասնակցում է...., մյուս դեպքում՝ ժողովուրդն ինքն է պատարագվում՝ հանուն իր հավատքի, ազգային պատկանելության, իր հավատարմության.... Եկեղեցական պատերից դուրս մի մեծ Պատարագ պատկերացրի, որին մասնակցում է ամբողջ ժողովուրդը՝ հոգևորականներով, ժողովրդի տարբեր շերտերով»:

Կենտրոնական կերպարը հոգևորականն է, իսկ գլխավոր դերակատարները՝ երեխաները: Ինչո՞ւ մանուկները. «....Նախ՝ որովհետև երեխաների հանդեպ գործած ոճիրն ամենասարսափելին է, և հետո՝ երեխաների սպանդով կարծեք թե սպանվում են այն ապագա երեխաները, որ իրենցից պիտի ծնվեին...., և ավելի է ընդգծվում գործած ոճրի հրեշավորությունը»,– նշում է նկարիչը:

Պատկերի մեջ Մեծ եղեռնի խորհրդանիշը նահատակների շուրջ գտնվող ջարդված խաչքարերն են՝ իբրև մշակութային ցեղասպանություն, սրբության եղծում, որոնք դեպի վեր բարձրացող մասում ամբողջացվում են, վերականգնվում:

Ամենաբարդ խնդիրը, ըստ նկարչի, բազմազանությունն ապահովելն էր: Խնդիր էր դրել՝ նկարել ժողովրդին՝ կերպարները չանձնավորելով, և որոշակի թիվ, հաշվելի կերպարներ չլինեին, գույները վառ չարվեին, այլ՝ թեթև-եթերային՝ աղոթքի ցանկություն առաջացնող: Ըստ այդմ՝ նահատակների ներկայությունը պատկերված է երկնքի ու երկրի միջև՝ ուրվագծված Արարատ լեռով՝ Արևմտյան Հայաստանի կողմից: Սուրբ Հոգին պատկերված է Հայր Աստծո և Արարատի միջև, Քրիստոս պատկերված է խաչվառի վրա՝ Հարուցյալ պատկերով: Իսկ Հայր Աստծո՝ իր նահատակներին ընդունող թևատարած պատկերը Գարեգին Բ Կաթողիկոսի մտահղացումն է եղել:

Սրբապատկերի պատրաստմանը և մանրամասների քննարկմանը մասնակցել են տարբեր հոգևորականներ, իսկ վերջնական հաստատումը սրբադասումից մի քանի օր առաջ՝ Գերագույն հոգևոր խորհրդի ժողովում է եղել. սրբանկարը տարվել է Մայր Տաճար, և հանձնաժողովի անդամների դրական արձագանքին ու հաստատմանն արժանացել:

Նկարիչը նշեց, որ սրբանկարն սկսել է պատկերել 2015 թ. հունվար ամսից և ավարտել նույն տարվա ապրիլին, իսկ ճեպանկարն ավելի վաղ է պատրաստել. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գրախանութից գնված մի գիրք՝ վերապրած Օննիկ Կարապետյանի հուշերն էր ընթերցում սրբանկարը կերտելիս (խոսքը վերաբերում է Հովհաննես Կարապետյանի (Օննիկ Յուսուֆ) հուշագրությանը՝ «Վերածնված կյանք մը. երևակայական և իրական սարսափների արանքում», խմբ. և հրատ. պատր. Վ. Ս. Մաղալյան, Երևան, ՀՑԹԻ, 2010): Գրքում զետեղված լուսանկարներից մեկից նկարիչը քաղել է մի կերպարի էսքիզ, որոշ ձևափոխությունների ենթարկել. դա սրբանկարի ներքևում պատկերված, նուռը ձեռքին աղջնակի կերպարն է: Ոգեշնչվել է նաև նկարիչ Վարդգես Սուրենյանցի՝ Էջմիածնում ապաստանած գաղթականների պատկերող ճեպանկարների շարքից՝ գուաշով և ջրաներկով արված:

Մինչև Մայր Տաճարի վերանորոգումը «Հայոց ցեղասպանության նահատակներ» սրբանկարը տեղադրված է եղել Մայր Տաճարում, հիմա, ինչպես վերը նշեցինք, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ռուբեն Սևակի անվան թանգարանում: Սրբանկարի ութ կրկնօրինակ է պատրաստվել, որոնցից մեկ փոքր օրինակ Գարեգին Բ Կաթողիկոսը 2016 թ. հունիսին նվիրել է Հռոմի Պապ Ֆրանցիսկոսին: Կարծում ենք, որ այն մոտ ապագայում կհայտնվի նաև Հայ Կաթողիկե և Ուղղափառ եկեղեցիներում ու համայնքներում. առանձին դեպքերն արդեն իսկ նշմարելի են՝ չնայած ցաքուցրիվ հանդիպող, համացանցային առանձին օգտատերերի ու անհատների մակարդակով:

Շուշան ԽԱՉԱՏՐՅԱՆ, պ. գ. թ.,
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Ցեղասպանության հետևանքները Հայ Եկեղեցում

Հայոց ցեղասպանության կործանարար հետևանքները 110 տարի անց էլ մնում են անդառնալի հայ ժողովրդի կյանքի բոլոր ոլորտներում: Օսմանյան Թուրքիայի կողմից միլիոնավոր հայերի ոչնչացումն ու բռնագաղթը նաև հոգևոր, մշակութային, մտավոր, բարոյական ու նյութական անչափելի կորուստ էր բոլորիս համար՝ որպես ազգի և տեսակի:

Աղետի ծավալները մինչև օրս մնում են չհաղթահարված Հայ Եկեղեցու կյանքում ևս. ցեղասպանությունն անբուժելի վերք պատճառեց մեր Եկեղեցուն, որը հայկական պետականության չգոյության, թուրքական բռնաճնշումների և շարունակական կոտորածների պայմաններում եղել է միակ պաշտոնական ու հեղինակավոր կառույցը, որ անսակարկ նվիրվել է հայության հավաքականության ու նրա հոգևոր-ազգային էության պահպանմանը:

19-րդ դարավերջին պատմական Հայաստանի տարածքները բաժանված էին Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև: Թեև պաշտոնապես Էջմիածնի կաթողիկոսությանն էր պատկանում Եկեղեցու կենտրոնի և առաջնորդի դերը, սակայն հասկանալի պատճառներով Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Թուրքիայի հայաբնակ շրջաններում առավել շոշափելի էր Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության դերը, որը հիմնվել է դեռևս 1461 թ.: Կայսրության տարածքում էին գտնվում նաև Սսի (Կիլիկիո) կաթողիկոսությունը, Երուսաղեմի հայոց պատրիարքությունը և Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914–1918 թթ., Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր Գևորգ Ե Սուրենյանցը, Պոլսո պատրիարքը Զավեն Տեր Եղիայանն էր, իսկ Սսի կաթողիկոսը՝ Սահակ Բ Խաբայանը: Նրանք էին, որ ականատես եղան իրենց բանավոր հոտի տառապանքներին ու սպանդին:

Դեռևս աշխարհամարտից առաջ՝ 1912 թ. սեպտեմբերի 4-ին, Պոլսո պատրիարք Հովհաննես Արշարունին Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված նամակում գրում էր. «Սկսվեց նոր ժամանակաշրջանը՝ ամենուր լի նոր չարիքներով, և այժմ, մասնավորապես, նրանց համար բեմ հանդիսացան Վանի, Աղթամարի, Բիթլիսի, Մուշի, Սերտի թեմերը. նորերս ստացված հեռագրերը հայտնում են սպանությունների, ավերածությունների, կանանց առևանգման և նույնիսկ անչափահասների իսլամացման մասին»: Պատրիարքը Կաթողիկոսին խնդրում էր հայրական ցուցում կամ խորհուրդ տալ՝ խելամիտ և գործնական ելքեր գտնելու ստեղծված իրադրությունում, և Գևորգ Ե Կաթողիկոսը դիմում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով ռուս ժողովրդից և ռուսաց կայսրից պաշտպանություն և հովանավորություն Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի համար:

Արդեն աշխարհամարտի տարիներին, երբ սկսվեց Հայոց ցեղասպանության հրեշավոր ծրագրի իրականացման վճռական փուլը, հայերին կոտորում էին և աքսորում ոչ միայն ազգային պատկանելության, այլև քրիստոնյա լինելու համար: Բռնի թրքացման մեթոդներ կիրառվեցին նաև Օսմանյան Թուրքիայում բնակվող այլ ազգերի՝ քրդերի, արաբների, չերքեզների, մահմեդական վրացիների և այլոց հանդեպ, սակայն այս ազգերը և ժողովուրդները չոչնչացվեցին:

Այո՛, հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության կազմակերպման հիմնական պատճառներից մեկը նաև հայերի քրիստոնեական դավանանքն էր: Հենց դրանով է բացատրվում այն փաստը, որ Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես Թուրքիայում կոտորածների առաջին թիրախ էին դառնում Հայոց Եկեղեցու սպասավորները:

Թուրքական կառավարությունը, որն Առաջին աշխարհամարտին մասնակցում էր ջիհադի՝ իսլամական սրբազան պատերազմի անվան տակ, իրականում ոչ մի կրոնական խղճմտանքի, անգամ իսլամի հետ հոգևոր որևէ առնչություն չուներ: Ինչպես իր հուշերում նշում է Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն. «Գործնականում նրանք բոլորն աթեիստներ էին, որոնք մահմեդականության հանդեպ ավելի հարգանք չունեին, քան քրիստոնեության, և նրանց միակ մղիչ ուժը սառնասիրտ, հաշվարկված պետական քաղաքականությունն էր»: Կրոնը, ըստ Մորգենթաուի, նրանց համար քարոզչության գործիք էր՝ թուրք ժողովրդական զանգվածներին ոչ միայն Անտանտի կազմում կռվող քրիստոնյա երկրների, այլև հայերի դեմ տրամադրելու համար:

Փաստերը վկայում են, որ 1915-ի ցեղասպանությանը զոհ է դարձել ավելի քան 1200 հայ հոգևորական: Զավեն պատրիարքի՝ 1915 թ. դեկտեմբերի 28-ին ԱՄՆ հայոց հոգևոր հովիվ Արսեն վրդ. Վեհունուն գրած նամակում կարդում ենք.



Մշո Սուրբ Առաքելոց վանք, 2010 թ. լուսանկար

«Առաջնորդներից Կարնո Սմբատ եպիսկոպոս Սաատեթյանը իր ժողովրդին հետ դեպի Միջագետք տարված ժամանակ Քեմախի մոտերը հրոսակներու կողմե սպանված է: Տրապիզոնի Գևորգ ծ. վարդապետ Թուրյան, Կարնո պատերազմական ատյանին ղրկված ըլլալով, ճամփան սպանված է: Շապին Գարահիսար Վաղինակ ծ. վարդապետ Հազարապետյան կախաղանի վրա իր հոգին ավանդած է տեղական վճիռով: Մշո Վարդան ծ. վարդապետ Հակոբյան բանտին մեջ բրածեծ մահացած է: Տիգրանակերտի Մկրտիչ ծ. վարդապետ Չլղատյան բանտին մեջ գանահար սպանված է: Եվդոկիայի Շավարշ ծ. վարդապետ Մահակյան, ձերբակալվելով Մեբաստիա, ղրկված ատեն ճամբուն սպանված է: Խարբերդի Պսակ ծ. վարդապետ Տեր-Խորենյան շղթայակապ դեպ Տիգրանակերտ այլոց հետ ղրկված ատեն խողխողված է: Յոզղատի Ներսես եպիսկոպոս Դանիելյան Սեբաստիո մոտերը Ալիսի ափերուն վրա ուրիշ 450 յոզղատցիներու հետ սպանված է: Եդեսիո Արտավազդ ծ. վարդապետ Գալենտերյան քաղաքին մեջ սպանված է ուրիշ 60–70 հայերու հետ վերջին ջարդեն առաջ: Բալուի Եզնիկ եպիսկոպոս Գալփակճյանի, Բազելի Սուրեն ծ. վարդապետ Գալեմյանի, Սղերդի Եղիշե վարդապետ Չանոյանի, Չարսանճագի Գևորգ ծ. վարդապետ Նալբանդյանի, Երզնկայի և Քեմախի Մելքիսեդեկ վարդապետ Հովիվյանի, Սամսոնի Համազասպ ծ. վարդապետ Եղեսյանի և Կյուրինի Խորեն եպիսկոպոս Դիմաքսյանի մահը ստույգ է, բայց պարագաները տակավին անծանոթ կը մնան: Կեսարիո Խոսրով եպիսկոպոս Պեհրիկյան մշտնջենական և Պրուսայի Պարգև ծ. վարդապետ Դանիելյան հնգամյա բերդարգելության դատապարտված են, սակայն հայտնի չէ, թե ուր գտնվին: Նիկոմիդիո Ստեփանոս եպիսկոպոս Հովակիմյան, Կոնիայի Գարեգին վարդապետ Խաչատրյան և Պանդրմայի Կարապետ եպիսկոպոս Մազլումյան տարագրված են իրենց հոտին հետ, և առաջինը՝ Հալեպ, երկրորդը՝ Մումպիճ, երրորդը՝ Քելիսի Ազիզիե գյուղը: Ասոնցմե զատ ողջ մնացող առաջնորդներն են՝ Գնել եպիսկոպոս Գալեմքերյան, որ կմնա Սեբաստիո տան մը մեջ արգելափակ, Իզմիրի Մատթեոս եպիսկոպոս Ինճյան և Հաճնի Պետրոս եպիսկոպոս Սաբաճյան իրենց վիճակներու մեջ: Չխնայելով նույնիսկ Կիլիկիո Սահակ կաթողիկոսը, որ Հալեպի քովերը՝ Պապ աքսորվեցավ և ապա ղրկվեցավ Երուսաղեմ, ուր կմնա այժմ»:

Պետք է նշել նաև, որ որոշ հոգևորականներ, չենթարկվելով համատարած աքսորի հրամանին, զենք էին վերցնում և մասնակցում ինքնապաշտպանական կռիվներին, որոնք քիչ թվով բնակավայրերում իրականացվում էին:

Թուրքական կառավարությունը 1916 թ. հուլիս-օգոստոսին լուծարեց Պոլսո հայոց պատրիարքությունը, իսկ Զավեն պատրիարքը կառավարական հրամանով աքսորվեց Բաղդադ:

Այսպիսով՝ 1200-ից ավելի հոգևորականների ջարդ, թեմերի առաջնորդների գլխատում, հոգևոր առաջնորդների աքսոր. ցեղասպանությունը նաև մեր ազգային ինքնության մաս կազմող քրիստոնեության և Հայ Եկեղեցու դեմ ծրագրված քաղաքականության իրագործում էր: Ստեղծված իրավիճակում միայն Գևորգ Ե Կաթողիկոսն է մնում եկեղեցական առաջնորդ, որ պետք է հովվական խնամքի տակ պահեր իր ժողովրդին:

Էջմիածնում Արևմտահայաստանից գաղթող հայության հեղեղ էր՝ սկսված դեռևս 1914 թվականից: 1914 թ. դեկտեմբերի 28-ին իր՝ թիվ 1990 հայրապետական կոնդակով Գևորգ Ե-ն ստեղծեց Էջմիածնի եղբայրական օգնության կոմիտե՝ գաղթական հայերին և վիրավոր զինվորներին աջակցելու համար: Գաղթական հայության հիմնական մասը տեղավորվեց Երևանին մոտ՝ Քանաքեռ, Արամուս, Բաշգառնի, Շիրաբաթ և Նորագավիթ գյուղերում: Սբ. Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի՝ 1915 թ. հունվարի 24-ի նիստում որոշվեց.

1. Կանոնավոր կազմակերպել գաղթականներին խնամելու և կերակրելու գործը.
2. Միաժամանակ անցկացնել միանման վիճակագրություն.
3. Գաղթականներին բաժանել հագուստ և անկողին.
4. Ամենուր կազմակերպել բժշկական օգնություն.
5. Գաղթականների համար ստեղծել բարենպաստ պայմաններ, բացել բաղնիքներ.
6. Ամեն կերպ նպաստել անտեր ու չքավոր երեխաների խնամքին ու ուսմանը.
7. Աշխատանքի ընդունակների համար աշխատանք կազմակերպել.
8. Ունենալ հատուկ չափաբերական մատյան Թուրքիայից, Պարսկաստանից և այլ վայրերից գաղթող փախստականների համար:

Այդ տարիներին գաղթականների շրջանում բռնկված տարատեսակ համաճարակներից զոհեր եղան նաև Մայր Աթոռի միաբանության շարքերում. վախճանվեցին Եփրեմ եպս. Սուքիասյանը, Վահան վարդապետը, Բաբգեն վարդապետը: Մահից հազիվ փրկվեց Գարեգին վրդ. Հովսեփյանը:

Հսկայական էր նաև Եկեղեցու կրած գույքային կորուստը: Թվերը ամենախոսունն են այս հարցում: Եթե Առաջին աշխարհամարտից առաջ Օսմանյան կայսրության տարածքում գործել են ընդհանուր թվով 2138 վանք ու եկեղեցի և 2249 ծուխ, ապա պատերազմից հետո մնացել են գործող 38 եկեղեցի և 42 ծուխ: Անհաշվելի են արժեքավոր ձեռագրերի, միջնադարյան մագաղաթների, խաչքարերի, եկեղեցական սրբազան պարագաների կորուստները:

1918 թ. Մուդրոսի զինադադարով Օսմանյան Թուրքիան պաշտոնապես պարտվող ճանաչվեց, ինչի հետևանքով ստիպված եղավ նույն թվականի նոյեմբերին վերականգնել Պոլսի հայոց պատրիարքությունը: Զավեն պատրիարքը 1919 թ. վերադարձավ Կոստանդնուպոլիս: Վերահաստատվեց նաև Սսի Կիլիկիո կաթողիկոսությունը: Սակայն պատճառված վնասներն այդպես էլ մնացին չփոխհատուցված, իսկ բոլոր վերքերը՝ չամոքված:

Եկեղեցին ոչ մի ջանք չխնայեց՝ հոգալու հայ գաղթականների կարիքները, փրկելու Արևելյան Հայաստանի պահպանված հատվածը թուրքական հետագա բռնազավթումից ու կոտորածներից, վերականգնելու այդտեղ դարերով կորսված հայկական պետականությունը և ամրագրելու այն հիմքերը, որոնց վրա այսօր հառնում է մեր ազգային-պետական ինքնությունը:

Էդվարդ սրկ. ՔԵՇԻՇՅԱՆ
Սոնա ՔԵՇԻՇՅԱՆ

Հայոց դարպասը

(հատված Վիլֆրիդ Էգգերսի համանուն վեպից)

Անահիտ Պետրոսյանը նստած էր վերջից վեցերորդ շարքում՝ այնքան հեռու, որ տեսադաշտն ազատ լիներ ու ոչ շատ հեռու առջևից, որ նրան չեզոք հյուր համարեն: Ապրիլյան այդ ուրբաթ երեկոյան նա վաղ էր եկել, որ տեսներ, թե ինչ հասարակություն կհայտնվեր հին մարզասրահում:

Օդի սառը հոսքն ինքն իրեն բացվող դռնից ներս էր բերում նոր այցելուների՝ հիմնականում, իհարկե, թուրքերի: Անահիտը սև մազերը գցեց ականջի հետևը՝ ավելի լավ շուրջը տեսնելու՝ առանց ուշադրություն գրավելու: Նա պատրանքներ չուներ: Երբ պատկանում ես մի ժողովրդի, որին փորձել են բնաջնջել, չես կարող երբևէ լավատես լինել: Լավատեսությունը բնորոշ է այն մարդկանց, որոնք աչք են փակում չարի առաջ, որովհետև նրանք ուզում են հարմարավետ ապրել: Հարմարավետ է ապրում նա, ով քամահրում է աշխարհը....

Մեզ կթաղեն, եթե մենք չպայքարենք: Հետո՝ հարյուր տարի անց, նրանք իրավացի դուրս կգան....

Այսօր էլ այդ Ալի Սոյլեմեզօղլի կոչվածի զեկուցումն էր, հաջորդիվ՝ «Թուրքիան և հայերը. բարդ հարաբերություն» նշանաբանով քննարկումը: Թեմայի վերաբերյալ մարդը գիրք է հեղինակել, հիմնել է միություն ու այն դիտավորյալ անվանել «Երկխոսություն հանուն խաղաղության»՝ ենթադրաբար հանրօգուտ ու ազատված հարկերից:

Հրավերներ է ուղարկել նաև արտասահմանյան շահերը ներկայացնող միությունը: Թող լինի մտքերի փոխանակում, ինչը վերջ կդնի թուրքերի և հայերի միջև եղած խնդրին, ամեն դեպքում այն մոտ կլինի դրան: Երկու կողմերն էլ պետք է արտահայտվեն, ազատ արտահայտվեն, սրտերը հովացնեն: Հեմշտեդի օրաթերթի մշակութային էջի հիմնական ցուցումն է սա: Լավ է հնչում: Բայց հայերի ու թուրքերի միջև ոչինչ խաղաղ չէր, սառը պատերազմ էր տիրում....

Անահիտը երջանիկ էր, որ իր տատիկից թուրքերեն էր սովորել: Նա ստացել էր էլեկտրոնային նամակ, որը թուրքերի մեջ պտտվում էր, ուր ասվում էր. «Առաջին անգամ Գերմանիայի պատմության մեջ հաջողվել է պաշտոնական շրջանակներում կազմակերպել մի միջոցառում, որի ժամանակ մենք կարող ենք Հայոց ցեղասպանության պնդումը բացահայտել այնպիսին, ինչպիսին կա՝ սուտ ու վիրավորանք թուրքիզմին: Ամբողջ երկրում մենք պետք է բոլոր ինստիտուտներին հասանելի դարձնենք նման միջոցառումների իրականացումը: Բոլոր թուրքերի հայրենասիրական պարտքն է՝ այս երեկոյին ներկա լինել»:

Անահիտը թարգմանեց այդ մեգալոմանիայով տառապողի նամակը և ուղարկեց քաղաքապետին ու քահանային, որը պետք է որպես մոդերատոր հանդես գար: Երկուսն էլ ջղայնացած մերժել են իրենց մասնակցությունը երևի հենց մի հայացքից, ինչի համար Անահիտը շատ հպարտ էր: Եթե նրանք ընթերցած լինեին գիրքը, ավելի վաղ դա կանեին....

Այն ժամանակ թուրքերը փրկել էին իմ երիտասարդ նախատատիկին, երբ նա պատերազմի ավարտին հասել էր Ուրֆա. նրան հասցրել են մի տան մուտքի մոտ, ներս բերել ու թաքցրել նրան: Հղի այրին, երբ շուրջկալը վերջացել էր, գոյատևել է հետնաբակում՝ մութ սենյակներում: Երեք ամիս անց նա Լիբանանում՝ ֆրանսիացիների մոտ էր, որտեղ էլ ունեցավ իր երեխային՝ իմ տատիկին, և հայի արյունը նորից սկսեց հոսել: Եվ ես չէի լինի առանց Ուրֆայի այդ թուրքերի, որոնք իրենց կյանքը վտանգեցին: Նրան թուրքեր են եղել, որոնց ես իմ գոյության համար պարտական եմ, անիծյալ...

Եկան նաև մի քանի քուրդ: Իրականում նրանք քրդեր չեն, այլ զազաներ, և նրանցից շատերը, որոնք ապրում են Հեմշտեդում կամ շրջակայքում, եկել են Բինգյոլի և Էլազըղի մարզերից....

Շուրջբոլորը բաբելոնյան խառնաշփոթություն. նախ՝ թուրքերեն, զազայերեն, քրդերեն՝ բոլոր բարբառներով, բայց նաև՝ իտալերեն, իսպաներեն, արաբերեն, իսկ տեղ-տեղ՝ գերմաներեն: Բացի թուրքերից, իհարկե, ոչ ոք չգիտեր՝ ինչ պետք է քննարկվի: Այդ ընթացքում համարյա դարձավ ութն անց կեսը, իսկ մարդիկ անընդհատ ներս են գալիս: Դահլիճը լցվեց:

Երբևէ տեսա՞լ ես թուրքական միջոցառում, որն սկսած լիներ ճիշտ ժամանակին:

Բեմի վրա՝ բաց համակարգչի հետևում, թաքնվել էր մոխրագույն մաշկով, սպիտակահեր մի մարդ: Նա հագին ուներ դարչնագույն ժակետ, թողնում էր լուրջ գիտնականի տպավորություն, ինչը շեշտում էր հանգիստ պահվածքով ու իրար վրա դրած ձեռքերով, և անունն էր Սոյլեմեզօղլի: Նրա կողքին արտասահմանյան խորհրդի նախագահն էր՝ Մոխթարզադան՝ Աֆղանստանից. մի հայտնի դեղագործ, որը կազմակերպում էր իր հին հայրենիքի ռազմական շրջանների բարեգործական մատակարարումները: Երևի դա իր պարտքն էր համարում՝ թույլ չտալ՝ երեկոն փչացնեն: Վերջապես, փոխըմբռնման փորձի դեմ առարկելու ոչինչ չկար:

Երբ էլ Մոխթարզադան խոսք վերցրեց, Անահիտը հետ նստեց ու խորը շունչ քաշեց: Նա ուզում էր ամեն դեպքում հանգիստ մնալ: Սոյլեմեզօղլին կոկորդը մաքրեց, վիզը հավի նման ձգեց տարբեր ուղղություններով, գրչով խփեց ջրի բաժակին, մինչև որ մարդիկ աստիճանաբար հանգստացան, և վերջինն էլ հասկացավ, որ միջոցառումն սկսվել է: Երբ էլ Մոխթարզադեն ափսոսանքով հիշատակեց քաղաքապետի և քահանայի բացակայությունը, խոսքը փոխանցեց Սոյլեմեզօղլուն: Ինչքան հաճախ է Անահիտը լսել այն, ինչ հիմա տեղի կունենա, այնքա՛ն հաճախ, որ համարյա ի վիճակի չէ այլևս դրանք լսելու, մանավանդ որ այդ սուտասանի գիրքը ի՞նչ տանջանքներով է ընթերցել: Դա չորրորդ կարգի հեղինակի անհաջող գործ էր, որին ոչ մի քննադատ չի անդրադառնա:

Հռչակավոր Dolchstosslegende-ն *(բառացի թարգմանությամբ՝ դաշույնի հարվածի լեգենդ: Այս հասկացությունը իրականում նշանակում է պատմության կեղծում, սուտ: Այն հորինվել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո Գերմանական կայսրության ռազմական ղեկավարության կողմից՝ նպատակ ունենալով հերքել Առաջին աշխարհամարտում Գերմանիայի պարտության մեղքի իր մասը՝ պատասխանատվությունը գցելով հանրային և քաղաքական գործիչների վրա)*, որը հարյուրավոր տարիների անընդհատ կրկնությամբ այնքա՛ն իրական էր դարձել, ինչպես Իմաստուն Զիոնի արձանագրությունները: Միշտ լինում են բավական քանակով անգրագետներ, բերանբացներ և հիմարներ, որոնք հավատում են դրան, և քանի որ թուրքերի մեջ այդ տեսակը շատ է, հիմնականում այդպիսիներին գտնում են նրանց մեջ: Իբր Առաջին համաշխարհային պատերազմում հայերը միացել են ռուսներին ու միասին գործել, որ երկրի արևելքը թուրքերից խլեն, իբր ունեցել են ընդհանուր գաղտնի զինապահեստ, օրինակ՝ Վանում՝ հեղաշրջում և մուսուլման հարևանների վրա բազմաթիվ բռնի հարձակումներ նախապատրաստելու համար, և Անտանտի ուժերի կողմից ճնշված երիտթուրքերի կառավարությանը ոչինչ չէր մնում անել, քան վերաբնակեցնել հայերին երկրի հարավային, հսկելի բնակավայրերում: Ընդ որում՝ ոչ ճիշտ կազմակերպման և բնակչության կողմից կատարվող խախտումների պատճառով մի քանի հազարը մահացել են, ինչը դաժան ու ցավալի էր և արժանի՝ մեծ կարեկցանքի, բայց որը չի կարելի ցեղասպանություն անվանել: Բայց սա դեռ բավական չէ. իբր ոչ թե թուրքերն են պարբերաբար սպանել հայերին, այլ հակառակը՝ հայերը, որոնք Կովկասում թաքնվել էին ռուսների մոտ, սպանել են երեք միլիոն մուսուլմանի:

Անահիտը ճանաչում է Սոյլեմեզօղլուն ու նրա նմաններին. նա թուրքապաշտպան մի բանակի անդամ է: Միշտ, երբ որևէ տեղ խոսք է բացվում հայերի ցեղասպանության մասին, ողողում են թերթերը, ռադիոհաղորդումները, հեռուստաքննարկումները: Շատերը՝ մասնագիտությամբ լրագրողներ, դա դարձնում են եկամտի աղբյուր, և դրանցից մեկը Սոյլեմեզօղլին է:

Այս կարգի միջոցառում Հեմշտեդում առաջին անգամ չէ: Այն գովազդում են գեղեցիկ ասույթներով՝ «Ատելությունը լուծում չէ», «Կոչ երկխոսության ու խաղաղության»: Դա ծածկում է պատմական հիմքերը: Բոլոր այն երկրներում, որտեղ քննարկվում է այս թեման, առաջանում է լարվածություն, հիմնականում՝ Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, ուր ապաստանել էին կենդանի մնացած հայերը: Այս ստախոսների բանակը մի շարունակություն է, երևի նաև թուրքական արտաքին քաղաքականության մի մաս: Ով խոսում է Հայոց ցեղասպանության մասին, բերանը փակում են:

Համարյա մի ամբողջ ժամ մարդը խոսեց, իր կարծիքը հաստատեց՝ գրքից քաղվածքներ անելով՝ այդ ընթացքում արժանանալով ծափահարության: Տարբեր տեղերից բարձրանում էին հավանության փսփսուքներ: Անահիտը նկատեց իր մոտ նստած իտալացի կնոջ հարցական հայացքները:

Դու չես կարող փախչել քո ճակատագրից, եթե հայ ես.... Անահիտը սառնասիրտ ու զուսպ է դարձել, որովհետև առաջին անգամ չէր, որ հայտնվում է նման մարտերի մեջ:

Դու միայն դիմանում ես, եթե սառն ես մնում. հուզվածը վատ է կրակում:

Վերջում Սոյլեմեզօղլին ասաց, որ ժամանակն է՝ թուրքերի ու հայերի բարդ հարաբերությունը վերանայել անկեղծության ու արդարության հիմքով: Դեղագործը շնորհակալություն հայտնեց Սոյլեմեզօղլուն հաջող զեկուցման համար և քննարկման առաջարկ արեց:

Անահիտը կանգնեց.

— Մի հարց կարելի՞ է...

— Այո՛, խնդրեմ,— Սոյլեմեզօղլին ժպտաց;

Նա չճանաչեց Անահիտին: Երբեմն հնարավոր չէ տարբերել հային թուրքից: Երկուսն էլ ունեն մուգ մաշկ, դարչնագույն աչքեր և սև մազեր:

— Գոյություն ունի գերմանացի նախկին դեսպանի մի փաստաթուղթ Մոսուլում: Նրա անունն էր Վալթեր Հոլշտայն: Նա հայտնել է, որ Մոսուլից Հալեպ տանող ճանապարհի շատ հատվածներում կարելի էր տեսնել այնքան կտրված մանկական ձեռքեր, որ դրանցով կարելի է ամբողջ ճանապարհը սալահատակել: Ձեզ ծանո՞թ է այս աղբյուրը... Դուք դրան անդրադարձե՞լ եք...

— Էհ, ես...

— Ես համոզված եմ՝ Ձեզ այն ծանոթ չէ, Դուք այն չեք օգտագործել: Վալթեր Հոլշտայնը նաև հայտնել է, որ տեսել է՝ ինչպե՞ս են ժանդարմ հսկիչները Դիարբեքիրում և Մարդինում բնակչությունից պահանջում հայերին սպանել: Ինչպես նա հայտնում է, Նուսայբինի հարավում՝ ամբողջ ճանապարհի վրա, կարելի էր տեսնել կեռ թրերով շուրջբոլորը վազող մահմեդականների: «Ermeni՝ այսինքն՝ հայե՞ր»,— ամենուր այսպես էին գոռում: Իսկ Դուք գիտե՞ք Ստամբուլում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի կենսագրությունը: Նա բազմիցս եղել է Թալեաթ փաշայի մոտ՝ ազդելու, որ հայերի կոտորածն ընդհատեն: Դուք սա գիտեի՞ք և այն օգտագործե՞լ եք:

— Մորգենթաո՞ւ, ա՛հ, այդ հրեան. նրա՞մն նկատի ունեք: Նրա պատկերացումները սխալ են, ու դրանք ապացուցված են, որոշ տվյալներ վիճարկելի են, ու ակնհայտ է, որ նա...

— Ո՞վ է դա ապացուցում, Դո՞ւք...

— Ե՛ս... Ես եմ հաստատում... Դուք, իհարկե, դիտավորյալ չեք ցանկանում հենց Գերմանիայում պնդել, որ հրեան չի կարող վստահելի լինել, որովհետև նա հրեա է: Սակայն մեկ այլ բան՝ Օսմանյան կայսրությունում և մինչև այսօր Թուրքիայում գործածական խոշտանգումը՝ զոհի հետևը ուժով դգանակ խոթելը...

— Դա ի՞նչ կապ ունի թեմայի հետ:

— Մեծ կապ: Մարտին Նիպագեն, որը 1913—1916 թթ. որպես ուսուցիչ աշխատում էր Հալեպի գերմանական դպրոցում, հայտնել է այն, ինչ իրեն պատմել են Բաղդադի երկաթգծի ինժեներները, իմիջիայլոց, ամեն ինչ՝ գերմաներեն՝ Վիլհելմ Պրեսելի ղեկավարությամբ, ամեն ինչ՝ կապված Թուրքիայի հետ: Ես դա անգիր գիտեմ, ես մեջբերում եմ. «Նրանք հայտնել են, որ երկաթուղու թմբի մերձակայքում՝ Թել Աբյադի և Ռասուլայնի մոտ, մասսայաբար թափված էին բռնաբարված կանացի մարմիններ՝ նույն տեսարանով...

Հարևան աթոռին նստած իտալացի տիկինն աչքերը փակեց ձեռքերով և շշնջաց՝ Սարսափելի՞ է...

— Եվ հիմա հրապարակեք մեկ ոչ թուրք պատմաբանի անուն, որը կիսում է ձեր պնդումը: Չկա այդպիսին,— շարունակեց նա, մինչ Սոյլեմեզօղլին կբացեր բերանը,— կան միայն թուրք գրողներ, որոնք մերժում են Անատոլիայի հայերի ցեղասպանությունը, և ոչ ոք նրանցից չի ասում ճշմարտությունը: Բայց վատն այն է, որ նրանք գիտեն ճշմարտությունը, գիտեն ու ստում են: Ու գիտեն, որ դա մնացածները գիտեն, ու դրա համար ստիպված են լինում միշտ արդարացնող միջոցառումներ կազմակերպել, և հենց Հեմշտեդում, որտեղ համարյա թե հայ չկա, որոնց հետ նրանք կարողանային ընկերանալ:

Անահիտը գոհ էր: Նա կարող էր դեռ քահանա Լեփսիուսին ու գրող Արմին Վեգներին ու նաև փաստաթղթերով, նամակներով, հեռագրերով, լուսանկարներով լեցուն ԱԳՆ-ի նախարարության արխիվն օրինակ բերել: Էլ չեմ խոսում Տիգրան Անդրեասյանի նկարների մասին, որոնք Ֆրանց Վերֆելն իր «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի մեջ տեղադրել է....

Սոյլեմեզօղլին երկարեցրեց վիզը, նա բացեց բերանը, բայց աֆղանստանցի դեղագործն առաջ ընկավ.

— Խնդրում եմ,— մենք պատմաբաններ չենք, ես կցանկանայի լսել հարցեր ու ավելի շատ դիտարկումներ, կինը.... Կներեք, ի՞նչ է Ձեր անունը:

— Իմ անունն Անահիտ Պետրոսյան է, ես հայուհի եմ և նորից եմ ուղղում հարցս պարոն Սոյլեմեզօղլուն. գոյություն ունի՞ որևէ թուրք՝ գոնե մեկ պատմաբան, որ կկիսի Ձեր միտքը: Խնդրում եմ՝ ասեք, նշեք գոնե մեկին:

Սոյլեմեզօղլու վիզն այնքան կարճացավ, որ նա կարողացավ այս ու այն կողմ շարժել կրիայի նման.

— Արխիվի ուսումնասիրությունը... Այն շտապ պետք է, որովհետև մինչև հիմա փաստացի թերի հիմքեր ունի...

Դեղագործը, մի արդարամիտ մարդ, ինչպիսին հիմա Անահիտը, ճանաչեց, ընդհատեց Սոյլեմեզօղլուն ու հայտարարեց.

— Ուրեմն չկա՞ ոչ մեկը...

Սոյլեմեզօղլին անմիջապես չպատասխանեց, և շարքերում մռթմռթոց բարձրացավ:

— Zur,— նա լսեց հետևից՝ այնտեղից, ուր նստած էին ալեվիների ընտանիքները: Նա զազա էր, իսկ դա նշանակում էր՝ «Սուտ»: Անահիտը հաղթեց: Նա թիկունքում զգում էր թուրքերի սառը հայացքները, և սիրտը խառնեց: Եթե ես այստեղ մնամ, հետ կտամ:

Անահիտը կանգնեց և նստածների միջով ճանապարհ բացեց դեպի ելք....

Գերմաներենից թարգմանությունը՝
Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, բ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 2.05.2025 թ.
Տպաքանակը՝ 1265